

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ
ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՐԱՒԳԱՐԱՆ

ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ

ԲԱՅՈՒՄ 1878 ԱՄԵՆ

ՆԻՍՏ ԺԹ.

23 ՓԵՏՐՎԱՐ 1879



Կ. ՊՕԼԻՍ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Մ. Կ. ՍԱՐԸՆԱՆ

1879

ԴԻԻԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ

ՄԱՅՐ ԴԻԻԱՆ

Ստեփան փաշա Ասլանեան	Ա. Ատենապետ
Տեղաւոր Էֆէնտի Կուսուֆեան	Բ. "
Մկրտիչ Էֆէնտի Մելիքեան	Ա. Ատենադպիր
Ատալժ Էֆէնտի Տէրոյենց	Բ. "

ՁԵՌՆՀԱՍՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

Մատթէոս Եղիսիպոս Իզմիրլեան	Ատենապետ
Ներսէս վարդապետ Ասլանեան	
Սենեքերիմ Էֆէնտի Մանուկեան	

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

Խորէն Արքեպիսկոպոս Նար-պէյ	Ատենապետ
Գէորգ Էֆէնտի Ապտուլլահ	
Գէորգ Էֆէնտի Աթիսարաճեան	

ԿԱԼՈՒԱՆՈՅ ԴԻԻԱՆ

Յովհաննէս Էֆէնտի Կասեան	Ատենապետ
Մինաս Էֆէնտի Գափաւանճեան	
Պօղոս Էֆէնտի Ժամակոչեան	

ՅԱՐԱԲԵՐՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

Կարապետ Էֆէնտի Ծաւոյազեան	Ատենապետ
Յարութիւն Էֆէնտի Մէրիէժ-Գալի	
Ստեփան Էֆէնտի Փափազեան	

ՀԱՄԱՐԱԿԱԼՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

Առաքել Էֆէնտի Աթման Տիւրքի	Ատենապետ
Մատթէոս Էֆէնտի Ալիբաճեան	
Յակոբ Էֆէնտի Արշակ	

ԻՐԱՒԱՍՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

Կարապետ Եղիսիպոս Սերոյրեան	Ատենապետ
Սահակ Ապրօ Էֆէնտի	

ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

Յովհաննէս Էֆէնտի Պոյաճեան	Ատենապետ
Մկրտիչ Էֆէնտի Կասեան	
Տօբթօր Փէշտիմալճեան Էֆէնտի	

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

Յարութիւն Էֆէնտի Նորատունկեան	Ատենապետ
Ատալժ Էֆէնտի Տէրոյենց	

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

ԲԱՅՈՒՄ 1878 ԱՄԻՆ

ՆԻՍՏ ԺԹ.

23 ՓԵՏՐՎԱՐ 1879

ՆԱԽԱԶ. — Տ. Մատթէոս եպօ. Իզմիրլեան (առժամեայ կարգեալ)

ԱՏԵՆԱՊԵՏ. — Ստեփան փաշա Ասլանեան

ԱԶԳԱՅԻՆ ԵՐԵՍՓՈՒԱՆՔ

ԿՆԳՐՈՆԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒԱՆՔ

ԵՆԵՂԵՑԱԿԱՆՔ

1. Խորէն Ա. քն. Նար. Պէյ Բ.
2. Կարապետ Էպօ. Սեբասթեան Բ. Պ
3. Մատթէոս " Իզմիրլեան
4. Ամբրոսիոս Վ. Ռուբինեանց Բ. Պ
5. Գարեգին " Թաթարեան
6. Խորէն " Կիւրճեանց Բ. Պ
7. Հմայեակ " Գիմարեան
8. Յովհաննէս " Փափազեան
9. Ներսէս " Ասլանեան
10. Պօղոս " Խօլտաճեան
11. Արիստակէս Գ. Մամբրէեան Բ. Պ
12. Գէորգ " Արճառեան
13. Գրիգոր " Աճառեան
14. Խորէն " Փէշտիմալճեան Բ.
15. Յարութիւն " Արճառեան
16. Յովհաննէս " Մկրտեան
17. Սուքիաս " Ստեփանեան
18. Սահակ " Տ. Սարգսեան
- 19.
- 20.

ԵՆԵՂԵՑԱԿԱՆՔ

(Ա. Վ. իճակ)

Գումգամիու, Կլետիկ փաշա
և Գումգամիուի դարս

21. Գրիգոր Պէրսեան Բ.
22. Գէորգ Սափարաճեան
- Բ. Բացակայութիւն առաջին 1
- Բ. 2 Բացակայութիւն երկրորդ 1
- Բ. Պ Բացակայութեան որ պատճառ 1

23. Խաչիկ Մանուկեան Բ. Պ
24. Կարապետ Աղաբաճեան Բ. 2
25. Համբարձում Մազպուրեան Բ.
26. Մինաս Գափաւանճեան
27. Յովհաննէս Պոյաճեան
28. Ն. Մէլգայրեան Տօբթօր Բ.
29. Պօղոս Պառնաւան
30. Սարգիս Աղաբաճեան Բ.
31. Սահակ Ապրօ Բ. Պ
32. Սենեքերիմ Մանուկեան Բ.
33. Փէշտիմալճեան Տօբթօր Բ. 5
34. Բարթօղ Քիւրճեպաշեան Բ.
35. Ատալժ Տէրոյենց
36. Գէորգ Ապտուլլահեան Բ. Պ
- 37.

(Բ. Վ. իճակ)

Պէլիկիւս

38. Աղաբաճեան Կիւրճեան
39. Ալիբաճեան Խօրատունճեան
40. Բարթօղ Հայաճեան

Եկեղեցիական

41. Մկրտիչ Քիւրճեպաշեան
42. Սեպուհ Մազպուրեան Բ.
- 43.
- 44.

Կաթողիկոս Ս. Խաչ

45. Սիմոն Տէլիկեան Բ.
46. Ստեփան Ասլանեան
- 47.
- 48.

ԽՍԿԻՄԱՐ Ս. ԿԱՐԱՊԵՏ

49. Միհրան Պաշտօնաւորեան
50. Պօղոս Թորոզեան Բ. Պ
51. Կիւրճոս Ալաճաճեան Բ.
52. Տրդատ Փափազեան

(Գ. Վ. իճակ)

Բերս և

Գաւրժ փաշա

53. Արիկ Ունճեան
54. Գրիգոր Ալիբաճեան
55. Մարտիրոս Յ. Տիւրքեան
56. Միքայէլ Մամբրէեան
57. Նշան Բարազեան Բ. 2
58. Ստեփան Խաղիբեան Բ. 2
59. Տէրեմար Մ. Իքսթրեան
60. Յարութիւն Նորատունկեան
- 61.
- 62.

Միւսիկ

63. Յակոբ Նորատունկեան Բ.
64. Տիւրքեան Կուսուֆեան
65. Պօղոս Երջողեան
66. Մկրտիչ Նորիկեան Բ.
67. Մկրտիչ Գազանճեան
- Պէլիկիւս և Գաւրժիս
68. Յ. Մէրեճ-Գուլ

(Գ. Վ. իճակ)

- Գումգամիու և Իճակի
69. Յովհաննէս Կասեան
70. Ստեփան Պէլիկեան

- 71. Կարապետ Շահապետան Բ. 4
- 72. Մկրտիչ Մուրադան
- Նարդիզար
- 73. Յակոբ Եղեղեղեան
- Երևանահայկ Սամարիոյ
- 74. Պողոս Մկրտիչեան Բ.
- Թօնիզար
- 75. Յովհաննէս Մարգարեան
- Էլույց Ս. Եղիա և Ս. Աստուածատրի
- 76. Գարեգին Յ. Մելիքեան
- Գորուշչիկ
- 77. Աստիա Ինդրաշեան
- Հասար և Պոյաճի զիւղ
- 78
- Նոր զիւղ և Սրէնիա
- 79. Ղազար Հովոսեան Բ. 3
- Պարտա
- 80. Մկրտիչ Գ. Էսահեան Բ. Պ
- 81. Յովհաննէս Կրճիկեան
- 82.
- Քարակիւմբիկ
- 83. Գարութիւն Զինճիւրճեան Բ. Պ
- 84.
- (Ե. Վիճակ)
- Սամարիա
- 85. Ալիքեան Պէլիքեան Բ.
- 86. Եղիշար Մելիքեան Բ.
- 87. Մինաս Ճափճափեան Բ.
- 88. Յակոբ Ամասեան Բ.
- 89. Նազարէթ Շահապետեան
- 90. Գարութիւն Թիւրքեան
- 91. Յակոբ Արշակ
- 92.
- 93.
- 94.
- Խաւարիցի
- 95. Մկրտիչ Ալիքեան Տրեքթ
- 96. Ռեզեա Պէլիքեան Բ.
- 97. Սարգիս Արքայանեան Բ.
- 98.
- 99.
- 100.

- ՔԱՒԱՌԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒԱՆՔ
- Կարիկ
- 101.
- Քէօքանեան
- 102. Մ. Փարապետ Տորթօր Բ.
- Անդրիանուպօլիս
- 103.
- Նիկովիցիա
- 104. Կարապետ Ս. Իւթիւնեան
- Այն
- 105. Պարոտ Մուսրեան Բ.
- Հարսնիսար
- 106.
- Արարիկեր
- 107. Կարապետ Խաչիկեան
- Բաղէշ
- 108
- Պարտա
- 109. Քրիստոստուր Ղազարոսեան
- Երզնկիա
- 110.
- Ամասիա
- 111. Համբարձում Աւանանեան
- Բարու
- 112. Յովհաննէս Ազնաւորեան
- Երզնկիա
- 113. Յակոբ Իւթիւնեան
- Մանճրլիս
- 114.
- Հանրն
- 115.
- Երզնկա և Բարերդ
- 116.
- Թէքիրտաղ
- 117. Տրեքան Գ. Սրնանեան
- Կեսարիա
- 118. Գէորգ Գրեճեան
- Խարրերդ
- 119.
- Պարթիսիւն
- 120.

- Մուր
- 121. Ստեփան Փարապետեան
- Տիվրիկ
- 122. Նշան Գարազաշ
- Զէյթուն և Մարաշ
- 123.
- Տրուդիզօն
- 124. Տրեքան Տ. Ներսէսեան
- Պարտա
- 125. Մէլքոն Իսկէնտէրեան
- Տիգրանուկերտ
- 126. Միշրան Զօրանեան
- Վան
- 127.
- Արարմար
- 128.
- Հալէպ և Այնթապ
- 129.
- Մերասիա
- 130. Մկրտիչ Յ. Մելիքեան
- Ռուսնուիս
- 131.
- Կարս
- 132. Արքայաճ. Յ. Ալվազեան
- Զնկուճագ
- 133. Համբարձում Սարգիզիւնեան
- Հասարիա
- 134
- Ատուս
- 135
- Սըրիդ
- 136. Մատթէոս Ալիքեանեան
- Եօզրատ
- 137. Լօղօֆէթ Պալեօզեան
- Մարտիա
- 138. Գէորգ Վարդանեան
- Իզմիր
- 139. Պապի Պապօսեան Բ.
- Երզնկա
- 140

Օ Ր Ա Վ Ա Ր Գ

Շարունակութիւն վիճարանութեան Հաշուեկշիւի
1879-80 տարւոյ

ԱՏԵՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՔ

Ի բացակայութեան Ս. Պատրիարք Հօր, Իզմիրեան Տ. Մատթէոս եպիսկոպոսի առժամեայ նախագահութեամբ ատենադպրութեան 48 երեսօտ խանայ, որոց վերջին թիւը յանգեցաւ 64 ի :

Քննարկութիւն և սխալութեան խնդրաց մասին Ատենադպրութեան

Վերջին նիստի դռնբաց մասին ատենադպրութեան հրատարակուած ըլլալով, երեսօտ խանք ի դիտողութիւն հրատարակեցան անոր խըմբադրութեան վրայ :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՃ. — Երես 375 և Ա. սիւնակ . իմ խօսքս սապէս պիտի ըլլայ .

«Օրակարգին խնդիրը պէտք է յուշուի . այն է Պէրլինի զանադրութեան ճարտարութեան գործադրութիւնն, որուն կը հետեւի գաւառական հարստահարութեանց և հետեւաբար Պատրիարքին հրաժարականի խնդիրն : Ուստի այսօր Քաղ. Ժողովոյ բերած խնդիրը յուշելն արգելք կըլլայ նոյն խնդիրը Պատրիարքական հրաժարականի խնդրոյն շուտ կարգադրուելուն . ուրեմն պէտք է Օրակարգի խնդիրը ձեռք առնենք :»

Գարձեալ երես 379 և Բ. սիւնակ . խօսքիս մէջ պահաս կայ : « Այս ալ իր վնասակար կողմն ունի ըստեցաւ . խօսքիս ետեւէն անմիջապէս պէտք է յանձնուի . « թէ և ես չըսի թէ Ս. Պատրիարքը Դրան հետ յարաբերութիւնը խզէ, մանաւանդ որ Ս. Պատրիարքը հրաժարականն առանց ժողովոյս գիտութեանը տուած է Բ. Դրան, և յարաբե-

բութիւնն ինքնին դադարեցուցած է անոր հետ :

ՔԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — Երես 377 և Բ. սիւնակ . Չեր վսեմութեան ի պատասխանի Նորին Սրբազնութիւնն ըստ առաջնայն շարունակէ ըսելով , ոչ թէ թագրիրներն եւն կնքէ ըսել ուզեցի , և չէի կրնար այ ըսել , զի յայտնի հակասութեան մէջ կիցնայի . այլ շարունակէ ըսելով իւր հայրական խնամքն ակնարկել ուզեցի , որուն համար ինչպէս Ատենապետաց զիւանն ըսած էր Նորին Սրբազնութիւնը կը խոստանայ իւր աջակցութիւնը նախընտրել :

Գալով թագրիրներու խնդրոյն , Քրիստոստուր էֆէնտի առաջարկութեան համաձայնութիւն ըսած էի թէ խոսան Ժողովը կրնայ պէտք եղած թագրիրներն ու գրութիւնները կնքել :

Որիչ զիտողութիւն ընող չըլլալով , նախնիքաց նախ դռնաց մասին ատենագրութիւնը վերայիչեալ զիտողութեամբ հանդերձ բռէի դրուեցաւ , և Ժողովն ԸՆԴՈՒՆՈՒՆՑԱԻ միաձայնութեամբ :

2.

Բացակայութիւնք

- Ազգային երեսփոխաններէն՝
- Տ. Կորսապետ Եզրս. Սերոբեան ,
- Տ. Արիստակէս ք.ճոյ. Մամբրէեան .
- Պողոս էֆէնտի Թորգոսեան , անձնական տիրութեան պատճառաւ լացակայութիւնն յայտնած ըլլալով , որիկնաւոր բացակայ նշանակուեցան ներկայութեան ատմարին մէջ :

3.

Առաջարկարիւն երկուց երեսփոխանաց

Ազգային երեսփոխան Քրիստոստուր և Քափաւաճեան Մ. էֆէնտիներու ստորագրու-

թեամբ յետագայ առաջարկութիւնը կարգացուեցաւ .

Վսեմափայլ Ատենապետ վաչա Ազգային Ժողովոյ

Նկատելով որ երբեմն Ազգին կողմանէ գաւառները զրկուած քննչաց ընթացից և գործառնութեանց նկատմամբ Ազգը տեղեկութիւն ունեցած և իւր համարառութեան իրաւունքը ցարդ ի գործ դրած չէ .

Նկատելով որ , այսպիսի կարևոր խնդրոյ մը յապաղումը կրնայ վնասութիւն լինիլ և Ժողովս ապագային առջև պատասխանատուութեան ենթարկել .

Ուստի կառաջարկեմք , Ազգն իր այս անբռնարարելի և աննահանջելի իրաւունքն ի գործ դնելու համար Սահմանադրութեան հաստատութեան մինչև հիմայ գաւառները զրկուած ազգային քննչաց արարքը յանձնախմբի մը միջոցաւ քննութեան ենթարկել :

Հեռահարար կը խնդրեմք որ սոյն առաջարկիս ստիպողութիւն արուելով քննիչ յանձնախմբի մ'ընտրութիւնը կատարուի անմիջապէս և անյապաղ գործի ձեռնարկելով ընդ հուպ իւր տեղեկագիրը ներկայէ Ազգ. Ժողովոյ :

Ազգ. Երեսփոխանք
Մ. ԳԱՓԱՄԱՃԵԱՆ Ք. ՂԱԶԱՐՈՍԵԱՆ
23 փետր. 79
յԱզգ. Ժողովարանի

ԻԻԹԻԻՃԵԱՆ Յ. ԷՖ. — Հինցած խնդիր է այս , ինչ օգուտ է յագել այսօր :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ . — Չեր այդ խօսքը առաջարկութիւնը մերժելու կը ծառայէ . բայց

հիմա խօսքը անոր վրայ չէ , այլ նախ պէտք է որոշել թէ ստիպողութիւն պիտի արուել թէ ոչ . եթէ ստիպողութիւնն կրնաւոր չէ , այն ատեն բուն խնդրոյն վրայ կրնար ձեռք կարծիքը յայտնել :

ԱՒԹԻՒՅԵԱՆ Յ. ԷՖ. — Ես ստիպողութեան հարկ չեմ տեսներ . արդէն խորհրդարանական տարեգրութիւնը մտայնած է . ձեռքը այս խնդիրը յառաջիկայ տարւոյն սկիզբն ըլլալու Համարատուութեանց . և մեր աւելի կարևոր խնդիրներովն զբաղինք :

ԻԻԹԻՒՅԵԱՆ Յ. ԷՖ. — Ես ընդհակառակն ստիպողութիւն կը պահանջեմ :

ՔԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — Մինչև հիմա իրաւունք մը չգործադրուելէն չհետևիլ թէ իրաւունք ըլլալէ դադարած է . ըստ իս պէտք է ստիպողութիւն արուելով յանձնախմբի մը կարգուի : Այս խնդիրը նոր ալ չէ Ժողովս համար , արդէն Ատենապետ վաչան կանխա ներկայած է այնպիսի առաջարկութիւն մը որ չգիտեմ թէ սր անկիւնը մնացած է : Երբ երկրորդը եւր նայն առաջարկութեան և կը խնդրենք որ ստիպողութիւն արուի :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ . Իմ առաջարկութիւնըս եթէ ըստ կը յիշեմ , համանման չէր այս առաջարկութեան :

Տէրութեան կողմէ Հայկական գաւառները զրկուող քննչաց կամ սցեքու սղաժոնու կազմը հրահանգ տալը տէրութեան կը պատկանի , Ազգը իրաւունք ունի մի միայն իր մասին անոնց գործառնութեանց վրայ հսկելու . իմ առաջարկութիւնս Ազգին կողմէն ուղղակի կամ սղգային ընտրութեամբ Տէրութեան կողմէն Հայաստան զրկուած քննիչներուն Հրահանգին նկատմամբ էր . կ'ուզիլ այս հրահանգին ինչ ըլլալն հասկնալ , կուզիլ որ այս տեսակ հրահանգաց համար սղգովին սղգանական կէտեր որոշուին և սցեքուք վերադարձին պարտաւոր ըլլան համար տալ Ազգին իրենց գործառնութեանց վրայ : Կը տեսնենք որ ստի

տարրեր է նոր եկած առաջարկութեանէն թէ և մէկ կէտի մէջ զայն կը չօշափէ : Այդ սոյն նոր առաջարկութեան տէր Երեսփոխանը ստիպողութիւն տալ կը խնդրեն . ստոր վրայ մէկ Երեսփոխան թեր խօսեցաւ , միւս մը դէմ . հիմա Ժողովին պիտի հարցնեմ . կրնա՞նի արդեօր ստիպողութիւնը . եթէ ընդունի Օրոսկարգին մէջ կը գետեղենք խնդիրը :

Անմիջապէս ստիպողութիւնը բուկի դրուելով , 1 բուկի դէմ ամենամեծ մասամբ ԸՆԴՈՒՆՑԱԻ և խնդիրն Օրոսկարգն անցունել ՈՐՈՇՈՒՆՑԱԻ :

Առաջարկարիւն Քրիստոստուր էֆէնտի

Յետագայ առաջարկութիւնը , զոր Քրիստոստուր էֆէնտի մտաուցած էր , կարգացուեցաւ .

Վսեմափայլ վաչա Ատենապետ Ազգ. Ժողովոյ

Ընդհանուր Ժողովոյ ատենագրութիւնները պէտք է բո որ Ազգային պաշտօնէից հաղորդուին : Թէ և Պօլսեցիք կրնան նիստերու ներկայ զանուելով ունկընդիր ըլլալ և տպագրեալ ատենագրութիւններն ստանալ , սակայն գաւառաց Առաջնորդք և վանահարք այս դիւրութիւնները չունին : Ուստի ինչպէս ասկից երկու տարի յառաջ 5-600 հաստագրելով իւրաքանչիւր Առաջնորդաց , վանահարց և Գաւառական Ժողովոյց դիւաններուն կը զրկուէր , բայց 1876-78ի վարչութեան անօրէնութեամբ խնայողութեան պատճառաւ փոխանակ 600 ի 200 հաստ տպագրել տալ որոտ :

նաւ, որով թէ գաւառաց Առաջնորդք և Վանահարք և թէ գաւառական Վարչութիւնք անաեղեակ կը գտնուին կեդր. ընդհանուր ժողովոյ գործառնութեանց և սրոյմանց:

Հետևաբար կառավարիկեմ որ կրկին 300 հատ տպագրուելով՝ ատենագրութեանց օրինակները զրկուին գաւառական Առաջնորդաց, Վարչութեանց և Վանահարց, որպէս զի ընդհանուր Ազգայինք տեղեկութիւն ունենան Ազգ. ընդհանուր ժողովոյ թէ գործառնութեանցը և թէ մէն մի երեսփոխանաց նիթացից նկատմամբ:

Ազգ. Երեսփոխան Բ. ՂԱԶԱՐՈՍԵԱՆ

23 փետր. 79

ՔԱՓԱՄԱՃԱՆ Մ. ԷՖ. — Կեկորդեմ և նախազին կառավարիկեմ:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Եթէ ընդդէմ խօսու չկայ, կրնայ նախազինու վարչութեան յղուիլ ՚ի տնօրէնութիւն:

Եւ ըստ որում զէմ խօսող չ'կար, անմիջապէս վարչութեան ՚ի գործադրութիւն յղու մը բուէի դրուելով միաձայնութեամբ ԸՆԴՈՒՆՆՈՒԵԱԻ Ժողովին:

ՍՏԻՄԱՐԱՃԵԱՆ Ք. ԷՖ. — [Ասեկայն Քաղ. Ժողովոյ] Ասկէ առաջ Համարակալութեան զիւանը Պիւսաձիկն տպագրական ծախսուց մասին զեղջ առաջարկած և ժողովն ընդունած էր. հիմա սոյդ առաջարկութիւն ընդունուելովը տպագրական ծախսուց յաւելումն կը հրամայուի ըսել է:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Երբ Ազգ. Ժողովը, խնդր մը կ'որոշէ վարչութիւնը զայն գործադրելու պարտաւոր է. բայց եթէ արգելք մ'ունենայ դարձեալ ժողովիս զիմեւ:

Իրաւունք ունի: Սոյէց գտտ եթէ այս վերջին որոշման գործադրութիւնն մտորիկ յաւելուած մը սխալի պատճառէ կեդրոնական սրնատիւն ծախսուց, բաւական է որ վարչութիւնն իր հաշուեցոյցին մէջ զայն կանոնապահուց նշանակէ ՚ի վերջ տարուց, որպէս զի իր պարտաւորութիւնը կատարած ըլլայ սահմանադրապէս:

Ճ.

Հայկական քարենորոգմանց խորհրդարանական յանձնախումբ

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Անցեալ նիստին զանազան մասին մէջ Օրակարգի խնդրոյն վիճարանութեանէն ետե խորհրդարանական Յանձնախումբ մ'ընտրեցիր, և քարենորոգմանց խնդիրն անոր յանձնելով գոցիր: Սոյն Յանձնախումբին անդամ կարգեցիր ինչպէս կը յիշէք 7 երեսփոխան, որոյ 4ը վարչութեան կրօն. և Քաղ. ժողովներէն երկերկու հոգի, և 3ը ասանցմէ դուրս, որոնք արդէն Հայկական խնդրոյն ծիագիրը պատրաստելով իրենց ստորագրոյն և ազգասիրութեան նոր նշան մ'ալ ընծայեր կին ժողովին: Դիւանը հետեւեալ օրն անասարկեց սոյն Յանձնախումբի ընտրութիւնն ու պաշտօնը ծանուցանել Ս. Պատրիարք Հօր: միանգամայն ընտրեալներն հրատարակեց ՚ի ժողով: Գոհութեամբ կը ծանուցանեմ որ գրեթէ ամենն ալ սիրով ընդունեցին մեր հրաւերը և Ս. Պատրիարք Հօր նախազանչութեամբ ժողով ըրին. զիւանին կարմեցին և սխան ձեռնարկել իրենց յանձնուած պաշտօնին. կը լսեմ նաև որ Ս. Պատրիարք Հօր աջակցութիւնն մտցելու խոստումն առնելու յաջողեր են: Փառք կը համարիմ մեզ այսպիսի յաջող ընտրութիւն մ'ըրած ըլլալնս. միայն արտաստիք պարագայ մը կայ. այն ալ կը յուսամ Չեր շնորհիւ բաւեալ այսօր. յանձնախումբի անդամներէն Մանուկեան Սենեքերիմ Էֆէնտի սա՛ նամակը կը գրէ ինձի:

[և կարդաց հետևեալը]

Վսեմափայլ Ատենապետ Փաշա Ազգային ժողովոյ

Պատիւ ունեցայ Ձեր 17 փետրվար թուականաւ առ իս ուղղեալ նամակն ընդունիլ, որով կը ծանուցանէք ինձ Հայկական խնդրոյ նկատմամբ կազմեալ նոր Յանձնախումբին դարձեալ անդամ ընտրուած լինելը: Այս առթիւ պարտանձին կը համարիմ Ձերմ շնորհակալութիւնս յայտնել Ազգ. պատկառելի ժողովոյ վրան այն վստահութեան զոր ցոյց կուտայ ինձ յանդամակցութիւն կոչելով զիս սոյն յանձնախումբին:

Արդարև շատ քաղցր էր ինձ ընդունիլ զայդ պաշտօն. բայց ցաւօք սրտի կստիպուիմ յայտ առնել թէ անձնական տկարութիւն և զբաղմունքս բողոքովն անխարող կը կացուցանեն զիս խղճի մտօք կատարելու զայն:

Վասն որոյ, Վսեմափայլ Տէր. խնդրեմ հաճեցէք ընդունիլ որքն հրաժարականս. միանգամայն խորին յարգանացս հաւատարմ:

ՍԵՆԵՔԵՐԻՄ Մ. ՄԱՆՈՒԿԵԱՆ 1879 փետր. 18 Բերայ

[Պետո շարունակեց]

Սենեքերիմ Էֆէնտի մեր պատուական անդամակցեցեալն մէկն է որ երբէք իր աջակցութիւնը չէ զրոյցած ազգօգուտ ձեռնարկութիւններու: Սա՛ տաղնապոյլից ժամանակի մէջ Ազգին խղճուեաց միակ պատասխարան Ս. Փրկչի հաստատութեան հոգն արխարար քատանձնելով, 5-6 տարի շարունակ և անձանձիր խնամեց հինգ վեց հարիւր աղքատ. հիւանդ, ծեր և անկեալը շնորհիւ առատաձեռնութեան Ազգիս որոյ ընդհանրութեան շնոր

հակաբեռն արժանացաւ իր առաջինական ընթացքովն: Այսպիսի ազգասէր և բանիրուն անձի մը գոծակցութեան զրկուիլն մեծ ցաւ է մեզ. թէև չգիտեմք թէ ժողովն ի՞նչ սխալի որոշէ, սակայն Դիւանը կը կանխէ խնդրել որ Սենեքերիմ Էֆէնտի հրաժեշտը չընդունիլ որոշէք: և կրկին հրաւիրէք զինքն իր աջակցութիւնը շարունակել իր ընկերներով:

ՔԱՓԱՄԱՃԱՆ Մ. ԷՖ. — Ես ալ մի և նոյն ոգւոյն սխալ խօսելի. ուստի կրկինելով Ստենապետ փաշայի ըսածները կառավարիկեմ անմիջապէս բուէի դէւել:

ՁԱՅՆԵՐ. — Կը կրկինեմ:

Ուրիշ խօսք ուղող չըլլալով Ատենապետ փաշան բուէի դրաւ Սենեքերիմ Էֆէնտի հրաժարականը, զոր ժողովը ԶԸՆԴՈՒՆՆԵՑ միաձայնութեամբ և ՈՐԿԵՆՑ դարձեալ հրաւեր կարգաւ յանուն ժողովոյ իր ազգասիրութեան, որպէս զի իրեն յանձնուած պաշտօնը շարունակէ:

Տեղեկագիր Ազգ. վարչութեան խումբ ժողովոյ և համակ Ս. Պատրիարք Հօր

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Անցեալ նիստին զանազան մասին մէջ Ս. Պատրիարք Հօր հրաժարականի պատճառաւ պատրիարքական պաշտօնավարութեան նկատմամբ յանձնարարութիւն մ'ըրելու վարչութեան. ահա տարի վարչութեան տեղեկագիրը:

[և կարդաց հետևեալը]

Վսեմաշուք Ատենապետ Փաշա Ազգային ժողովոյ. Ազգային ժողովդ իր նախորդ նիստին Ամեն Ս. Պատրիարք Հօր պաշտօնավարութեան արգելքներուն բարձման մասին Գաղ. ժողովոյ կողմէ մատուցեալ յայտագրին վրայ որոյցած Բարդարձնել ինձի:

որպէս զի կրօն. և Բաղ. Ժողովք Հա- մախորհուրդ գումարմամբ Ս. Պատրի- արքին հետ խորհրդակցին և անոր ազ- դասիրական զգացմանց կոչումն ընելով աշխատին ելք մը գտնել խնդրոյն և արդիւնքը հաղորդել պատկառելի Ժո- ղովոյդ :

Սոյն որոշման համաձայն Խառն Ժողովս ի խորհուրդ գումարուելով ան- միջապէս պատգամաւորութիւն մը կազ- մեց իր կողմէ Ս. Պատրիարքին հետ վե- ռոյիչեալ խնդրոյն վրայ նախապէս բա- նակցելու համար : Իսկ պատգամաւո- րութիւնը որոշեալ օրը Ս. Պատրիարք Հօր տունը երթալով և զանի հոն չը գտնելուն պատճառաւ հարկ եղած նախնական բանալցութիւնը չկրնալով կատարել, Խառն Ժողովս պարտաւորե- ցաւ ինքնին նկատողութեան առնուլ խնդիրը, հարկ եղած միջոցներուն վը- րայ նախ ինքը համաձայնիլ և ապա առաջարկել Ս. Պատրիարք Հօր հաւա- նութեան : Սոյն տեսութեամբ Խառն Ժողովս յետագայ երկու եղանակներուն վրայ համաձայնելով :

Ս. Եղանակ

Բ. Դուռը զրկուելիք թագրիրները և ամուսնական խնդրոց իլամները կրօն. և Բաղ. Ժողովոց կնիքներովը կնքել, կուսակալաց և ուրիշ պաշտօնակալաց զրկուելիք թէ հեռագիր և թէ յանձ- նարարագիր Խորհրդական Սրբազանի կողմէն ստորագրել, ինչպէս նաև ներ- քին յարաշրջութեանց վերաբերեալ պաշտօնագիր և շրջաբերագրանները, զո- րոն արդէն կատարագրէր Ս. Պատրիարք Հօր հրամանաւ : Իսկ ազգային վազը- ֆաց վերաբերեալ կալուածագրերն

Պատրիարքական փոխանորդարանի կըն- քով վաւերացնել :

Բ. Եղանակ

Եպիսկոպոս մը Պատրիարքական Փոխանորդ կարգել, որպէս զի Պատ- րիարքական պաշտօնավարութեան վե- րաբերեալ բոլոր գործողութիւնները փո- խանորդաբար կատարէ, զլուծու մն Ս. Սեն. Ս. Պատրիարք Հօր առ Բ. Դուռն մատուցած պատճառարանեալ հրաժա- րագրի խնդրոյն, և սոյն Փոխանորդին պաշտօնավարութիւնը հաստատել տալ Բ. Դռնէն :

Խառն Ժողովս վերոյիշեալ երկու եղանակները համաձայնութեամբ որո- չելէ ետև, զանոնք գրով յատուկ պատ- գամաւորութեան մը ձեռօք առ Ս. Պատրիարք Հայրն ուղղեց, որպէս զի այս երկու եղանակներուն մէկին կամ միւսին համար նորին Սրբազնութեան հաւանութիւնը խնդրէ : Ն. Սրբազնութիւ- նը յիշեալ պատգամաւորութեան պա- տասխաններ է թէ արդէն ինք խնդիրը նը կատողութեան առած և եպիսկոպոս կամ տեղապահ մը կարգուելու ժամին իր կարծիքը յատուկ գրով մը առա- ջարկած է Ազգային Ժողովին :

Խառն Ժողովս Ն. Սրբազնութեան սոյն պատասխանն ստանալէ ետև, նը- կատելով որ Ս. Պատրիարք Հայրն Վարչ- շութեան առաջարկած եղանակներուն երկրորդին համամիտ գտնուած և իւր հաւանութիւնը գրով հաղորդած է Ազ- գային Ժողովիդ, թէ և խնդիրը վերջա- ցած կը տեսնէր, սակայն ըստ որում Ազգ. Ժողովէն յանձնարարութիւն ե- ղած էր այս մասին Վարչութեան կրկին Ժողովոց համախորհուրդ կարծիքն յայտ-

նել, հետևապէս սոյն տեղեկագրով կրօն. և Բաղ. Ժողովոց այս մասին ու- նեցած կարծիքն յայտնելով :

23 փետր. Մնամք խորին յարգանքք 1879

Կրօնական Ժողովոյ

Արեւ-դղէր — Բ. Արեւ-դղէր
Ս. Դն. Տ. Սարգսեան Մ. Եպս. Եզմիրյեան

Քաղաքական Ժողովոյ

Արեւ-դղէր — Արեւ-դղէր
Յակոբ Զօպանեան Գէորգ Ստիւնարսեան

Ահաւասիկ նաև սոյն խնդրոյ առթիւ Ս. Պատրիարք Հօր ինձ ուղղած նամակը :

[Ե. կարդաց հետևեալը]

Վսեմախոյլ Ասենապետ փաշա Ազգ. ընդհանուր Ժողովոյ

Քանիցս հաղորդեցի պատկառելի Ժողովոյդ ինչպէս նաև Բ. Դրան՝ թէ Պատրիարքութեան ծանր պաշտօնին ան- կարող կը գտնուիմ, և թէ ակարութիւ- նըս չթողուր որ այս գործերով զբաղիմ, և խնդրեցի թախանձեցի որ հրաժարա- կանս ընդունուի : Թէ Բ. Դուռը և թէ Չեր առենապետաց դիւանը և թէ Խա- ուրն Ժողովոյ կողմէն ներկայացողք յայ- տարեցին թէ չընդունուիր հրաժա- րականս, չգիտեմ ինչ պատճառաւ : Ըստ որում մէջ բերուած պատճառներուն պատասխանները ուի, և հրաժարակա- նըն ետ առնել անկարելի է ըսի՝ թէ Բ. Դրան և թէ Չեր. բայց դարձեալ կը թախանձէք և կը պահանջէք որ այս պաշտօնը չթողում :

Արդ՝ դարձեալ պարտաւորուած եմ յայտարարել այսու գրով թէ ան-

կարելի է ինձ մնալ այս պաշտօնին մէջ և թէ յայտնի եղած պատճառներուն գլխաւորը իմ վատաւսողութիւնս է որ յայտնի է Չեր. ուստի կաղաչեմ որ եթէ Պատրիարք մը ընտրել հիմակու հիմաց դժար է, զոնէ ֓ոխանորդ մը կամ լաւ ևս Տեղապահ մը ընտրել բարեհաճիք, որպէս զի Բ. Դրան հետ յարաբերու- թիւնք և Ազգային գործառնութիւնք չգաղբին և չվնասին :

Աղօթարար

Խ. Մ.

ՆԵՐՍԷՍ ԵՊ. ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆ

1879 փետր. 23

Ի Կ. Պօլիս

Ինչպէս կը տեսնէք, Նորին Սրբազնու- թիւնն իր կամբը բացարձակի կը յայտնէ : Ի- րեն համար անկարելի է կըսէ շարունակել իր պաշտօնը, բայց Ժողովս ալ բանիցս արդէն յայտարարած է թէ Նորին Սրբազնութեան հրածեշան ընդունիլ անկարելի է : ուստի խըն- դրոյն հրաժարականի մտաք զոնց ընելով եր- կրորդ մտաք կ'առնուր խօսքի նիւթ ընել, որպէս զի Պատրիարքական պաշտօնավարու- թեան գործնական եղանակ մը գտնելը : Ս. Պատրիարքը կրտէ թէ՛ եթէ առ այժմ՝ նոր Պատրարք մ'ընտրելու դժուարութիւն կայ, ֓ոխանորդ կամ տեղապահ մը ընտրեցէք, ա- սի կը ցուցնէ թէ Նորին Սրբազնութիւնն ալ Խառն Ժողովոյ առաջարկութեան երկրորդ կէտին համակարծիք կը գտնուի : Բայց վի- ճարամտութեան չսկսած նախ պէտք է որոշէք թէ խնդրոյն ստիպուլութիւն տալ հարկ կը տես- նէք՝ ինչպէս անցեալ նիստին ըրիք, և թէ ոչ խնդրոց կարգը կուղէք անցունել և Օրակարգ- զին սպասել :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Գ. ԵՖ — Թէ և ես էի անցեալ նիստին ըսողք թէ Պերլինի դաշնա- գրին Յերգ յօդուածոյն գործադրութեան խըն-

ալ ըլլայ՝ չենք կրնար բռնութեամբ վար դնել։ Բայց եթէ Ներսէս Արքայանի հրաժարականը չենք ուզեր ընդունիլ, չէ՛ թէ իր տեղն ուրիշ մը գտնելու գծաւարութեան համար է, այլ ասոր մէջ քաղաքականութիւն մը կայ. այն ալ Հայկական խնդրոյն մէջ իր բռնած ընթացքն է. մէկ անձ մը՝ մէկ անուն մը՝ ամբողջ այս խնդրոյն քաղաքականութիւնը կը ներկայէ բոլոր Եւրոպոյ տաղև. այնչափ քաղաքագիտութեամբ և ազգուսպէս գիտցաւ ազգային խնդիրը պաշտպանել, որ թէև քանիցս անգամ ուզեց պատրիարքութենէն հրաժարիլ, բայց անկարելի եղաւ իր հրաժարականն ընդունիլ. և մինչև իսկ զիս պիտի մեռցնէք ըսած ատենը՝ հարկ ըլլայ նէ Ազգին համար պիտի մեռնիք բաւեցաւ և չընդունուեցաւ։ Նիստադրութեան արժանի է արդարև թէ Ազգին Նորին Արքայութեան վրայ ունեցած այսչափ յարգանքն և թէ ազգային խնդրոյն մէջ Նորին Արքայութեան բռնած այնչափ քաղաքագիտական ընթացքը։ Հիմա Ս. Պատրիարքին հրաժարականն ոչ Ազգն ընդունած է և ոչ Բ. Գուռը. այս նկատմամբ զարմանալի վիճակի մը մէջ կը գտնուէինք այսօր. և կը սարսուռորինք՝ Նորին Արքայութեան հրաժարականը չընդունելով հանդերձ այնպիսի միջոց մը գտնել, որով ազգային գործերը կարենան ուղղութեան մէջ ընթանայ, մինչև որ Հայկական խնդրոյն լուծուելովն այն քաղաքական կիճիւններն՝ որ Նորին Արքայութեան հրաժարման առիթ ընծայեցին, մէջ տեղէն բարձուին։ Ասոր համար տարակոյս չկայ որ եթէ Տեղապահ դնել ուզենք, այդ անունով Նորին Արքայութեան հրաժարականը քիչ շատ ընդունած պիտի համարուինք, ինչպէս որ այս կէտը դիտել տուողներ եղան որս մ'առաջ, որով փափարուած նպատակին պիտի չկրնանք հասնիլ։ Աստի պէտք է այս առիթէն օգուտ քաղել, պէտք է Վարչութեան ձեռք Բ. Գրան ծանուցանել թէ ինչպէս որ ինք ընդունած չէ Պատրիարքին հրաժարականը, նոյնպէս Ազգն ալ չէ ընդունած, և սակայն դադրած է Նա Ազգին գործերը

տեսնել, քանի որ իր հրաժարման պատճառով օտարագաները կան ու կը մնան. ուստի յանուն Ազգին խնդրել որ Բ. Գուռը չնորձ ընէ ուշադրութիւն ընծայել Ս. Պատրիարք Հօր առաջարկութեանց և ժամ մ'առաջ գործնաբար ի գործ դնէ, որպէս զի Պատրիարքի հրաժարման խնդիրը կարենայ լուծուիլ և վերջանալ։ Իսկ դաւով թէ այս վիճակին մէջ մեր ներքին գործերն ի՞նչ կերպով պիտի տեսնուին, ես կը կարծեմ թէ Խառն ժողովոյ առաջարկութեան երկրորդ եղանակն, այն է Փոխանորդ բաւը Սահմանադրութեան հակառակ չէ Խառն ժողովը կրնայ քայն ընտրել և Պատրիարքը հաստատել. թէ որ Պատրիարքական աթոռը թափուր ալ ըլլայ, Խառն ժողովը Տեղապահ անգամ ընտրելու իրաւունք ունի, խընդիրն անձի վրայ չէ. որչափ որ վստահորէ մը կայ արդէն, քանի որ եպիսկոպոս Փոխանորդ մը դնել պատշաճ կը գտնուի, ես պիտի առաջարկեմ որ եպիսկոպոս Փոխանորդ մը ընտրուի, և այս ալ ծանուցուի Բ. Գրան. իսկ թագրիւնները միայն կրնան և Բաղ. ժողովոյ կողմէն կնքուին, ըսելով Բ. Գրան թէ Պատրիարքը չկնքէր. սակայն առիթ մ'է հասկըցընելու Բ. Գրան թէ Ազգը գրեթէ առանց Պատրիարքի մնացած է։

S. ՄԱՏԹԷՈՍ ԵՊՍ. — Երեսօրեան տեւրք, Ս. Պատրիարք Հօր հրաժարման օրէն մինչև ցայս կէտ ճիշդ Եւսուֆեան էֆէնտիի ըսած զիրքին մէջ կը գտնուէր Ազգային Վարչութիւնը. այսինքն այն օրէն ի վեր՝ որ Ս. Պատրիարք Հայրն իր յարաբերութիւնը դադրեցուց Բ. Գրան հետ, Վարչութիւնն ալ կեցաւ իրաց վիճակէն օգուտ քաղելու համար, որպէս զի Բ. Գուռն ըստ ճարտ. յօդուածոյ Պէրլինի դաշնագրին ինչ պարտականութիւններ որ ստանձներ է ըսկրսի կատարել։ Այս քիչ շատ առաջ գնաց և իր նշանակութիւնն ունեցաւ. բայց Վարչութիւնը չէր կրնար մինչև վերջ յետաձգել այն խնդիրներն՝ որ կարեւորութիւն ունին, ինչպէս են ամուսնական դատերու վերաբերեալ վճարները, առ կուսակալութիւնն ուղղեալ

քանձնարարագրերն, և այլն, որոնք Պատրիարքական կնքոյ կարօտութիւն ունին։

Այս ամենը Վարչութիւնը վարանման և շփոթութեան մէջ ձգած էր։ Եւսուֆեան էֆէնտիի կառավարիչ շարունակել նաև յետ այսորիկ միևնոյն վիճակին մէջ Փոխանորդ մը ընտրելով. մէյմ'ալ կառավարիչ որ կրնայ և Բաղ. ժողովոյ կնքովն երթան Բ. Գրան վերաբերեալ թագրիւնները, և սարսուել որ Բ. Գուռն բարենորոգմանց մասին յանձն առած սարտականաթիւնները կատարէ։ Բայց այդ երկու սարագային մէջ ալ Վարչութիւնն իր գծաւարութիւններն ունի, և անկարելի է իրեն յարատեւել այդ վիճակին մէջ մինչև բարենորոգմանց գործադրութիւնը։ Վասն զի ինչպէս Խառն ժողովոյ կողմէ Մեծ Եպարգոսին գնացող սրտագամուտութեան բերած տեղեկագրէն ալ յայտնի է, Մեծ Եպարգոսը պատասխանած էր թէ միթէ Պատրիարքն հրաժարելով Ազգին օգուտ ըրած կըլլայ, և ուղած էր որ Ս. Պատրիարքն երթայ իրեն հետ տեսակցի և մէկտեղ խորհրդակցին։ Ն. Արքայութիւնը գնաց և տեսուեցաւ ալ. բայց ետ շառաւ իր հրաժարականը, և Մեծ Եպարգոսը նորէն ըսաւ թէ ի՞նչ կրնայ ընել քանի որ անդրադուի կը մնայ Ն. Արքայութիւնն իր հրաժարման վրայ։ Այս ծանր վիճակին մէջ երբ մէկ կողմէ չենք կրնար Ս. Պատրիարք Հօր հրաժարականն ընդունիլ, միւս կողմէ Վարչութիւնն ալ չկրնար գործել և կանգամաւորւի։ Թեքեալ Եւսուֆեան էֆէնտիի տեսութեան համաձայն ընդունինք որս մը՝ որ այս վիճակին մէջ շարունակելիս իր ազդեցութիւնն ունենայ, սակայն մեր հիմնական Փոխանորդով անկարելի է, այլ Վարչութեան առաջարկութեան համեմատ եպիսկոպոս Փոխանորդ մը զրուելու է և անոր ընտրութիւնն այս ժողովէն ըլլալու է, որպէս զի Պատրիարքին պէս սրտատախանատու ըլլայ։

ՄԱՄԻԿՈՆԵԱՆ Մ. ԷՅ. — Նախ կողմ հասկընալ թէ սցսորուան նիստը դրնիփակ է մի։

ՋԱՅՆԵՐ. — ՈՂ, ՄՂ. ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ժողովն դռնբաց նիստի հրախրուած է և մինչև ցայս վայր դրոշմակի տառաջարկութիւն չեղաւ. եթէ կուղէր կրնար առաջարկել, Ժողովն որոշում կուտայ։ Ասկէ զատ՝ գրեթէ դրնիփակ է նիստերնիս, վասն զի հանդիսական միայն մէկ հոգի կայ՝ որոյ ազգասէր անձ մ'ըլլալը ամենուս ծանօթ է։

ՄԱՄԻԿՈՆԵԱՆ Մ. ԷՅ. — Ս. Պատրիարքն ինչ ինչ պատճառներով հրաժարական մատուցած է Բ. Գրան. մեր հիմայ կեննէր անոր տեղ Փոխանորդ կամ Տեղապահ մը դնել կը ձեռնարկենք և կը սրտատախանութիւն ըսել Բ. Գրան թէ որովհետև Պատրիարքը կը պնդէ իր հրաժարականին վրայ, Ազգին գործերն երեսի վրայ չմնալու համար ահա Փոխանորդ մ'ընտրեցինք, և անոր միջոցաւ պիտի տեսնուին Ազգին գործերը։ Բ. Գուռն ի հարկէ հաճութիւն կուտայ ասոր. վասն զի լուրջայն կըսէ. « ինձի համար Հայոց ազգին սրտատախանատու եկեղեցական գլուխ մը պէտք է, կուղէ Պատրիարք անունով ըլլայ, կուղէ Փոխանորդ անունով, երկուքն ալ ինձի համար հաւասար է »։ Բայց ես կը հարցնեմ. եթէ այս կերպով Փոխանորդ կամ Տեղապահ մ'առաջարկենք և Բ. Գուռը վաւերացնէ, արդեօք կարելի է Ս. Պատրիարք Հօր առաջարկութեանց գործադրութիւնն յուսալ։

Աստի ես ալ համաձայնելով Եւսուֆեան էֆէնտիի կառավարիչ գրեւ Բ. Գրան թէ որովհետև Ս. Պատրիարքը իրեն եղած խտուսմանց անգործադրութենէն յուսահատած և ետ քաշուած է, պէտք է որ ժամ յառաջ անոր առաջարկութիւններն ընդունուին և գործադրուին, որպէս զի կարող ըլլայ իր հրաժարականն ետ առնուլ և շարունակել. ինչպէս որ Ազգը կը բաղձայ։ Իսկ թագրիւններն առ այժմ միայն Խառն ժողովը կատարէ և կը կնքէ։ Այս կերպով հարկադրել Բ. Գուռն որ բարենորոգումները գործադրէ։

Տ. ՆԵՐՍԷՍ ՎՐԴ. — Երևանի Եփ. սահմանադրական եղանակ մը կառավարելէ ժողովին. սակայն ժողովն իր աչիքն առջև ունենալով ներկայ պարագայները, միանգամայն իր նկատողութեան նիւթ ընելով Ս. Պատրիարք Հօր առաջարկութիւններն և գլխաւորապէս ամենին կնճատ տեսնելով Բ. Գրան բանաձ գիրքը, կը վարանի թէ պիտի կրնայ այս վիճակին մէջ մնալ: Այս վարանումը լուծել հարկ է, և եթէ կարենամք լուծել զայն, ժողովն ալ կրնայ գործել: Սակայն ըստ որում պարագաները բացառիկ են, մեր ալ բացառիկ կերպով գործելու ենք: Արտաթիւթէ Բ. Գրան վարանը չէ, եթէ Ս. Պատրիարքին տեղ ուրիշ մէկին իր փոխանորդ կամ տեղապահ գրուած տեսնէ, և իրօք ալ այնպէս է. ժամանակէ մը ի վեր գրեթէ Պատրիարք չունինք, թագրիւնք չեն գրուիր Բ. Գրան. հարատւարութեանց վերաբերեալ հեռադրերը մեր Բարոյքէհաստին կը տանի Նախարարաց. սօր է, ինչո՞ւ Բ. Գրան չը հարցնէր. միթէ կը հաւատարմորէր որ երբ տեղապահ կամ փոխանորդ մը դնենք և անոր ըստորադրութեամբն ու կնքովը թագրիւնքը գրենք, պիտի հարցնէ թէ ինչո՞ւ Պատրիարքին չհիփէր: Ես չեմ հաւատարմասոր: Բ. Գրան իր միտքը դրածէն երբէք չպիտի չեղի:

Թէ և իմ միտքս կառավարութեան առարքը քննադատել չէ, և թէ սկստ դանդաղ նիստ չէ այսօր, բայց սրովհետեւ դանդաղի զիրք ունի ըստեցաւ, թող ներք ինձ ժողովն մէկ երկու խօսք ընել: Ի՞նչ ըրաւ Գրան մինչև ցարդ երբ Հայաստանի հանապարհայեց և անտանելի հարատւարութեանց համար դարման խնդրեցինք. արի՛շ բան չըրաւ այլ ըստուակ տո՛ պատասխանեց թէ ձեր ամեն խնդրածները պիտի կատարուին, բայց պէտք է համբերող ըլլա՞ք և սպասէ՞ք: Ո՞վ որ կուզէ ձեր մէջէն թող հաւատայ այս խօսքին և թող համոզուի թէ իրօք բարենորոգումներ պիտի ըլլան. կարելի է որ մ'ըլլան, բայց կարծեմ

երբ Հայ մը չմնայ Հայաստանի մէջ. իմ հաւատքս է չհաւատալ Գրան խոստումներուն: Ուստի ով որ ալ դնէք, թէ իրրեւ Տեղապահ և թէ իրրեւ Փոխանորդ, Գրան ամենին խօսք և խնդիր չպիտի ընէ, և չպիտի ըսէ յաւիտեան որ Պատրիարքին թող հրաժարականն ետ առնէ: Ասկէ ինչ օգուտ պիտի բաղենք Ազգին համար, ոչինչ. բայց եթէ ցոյց տալ աշխարհի թէ Պատրիարքը մինչև ցարդ խաբուեցաւ, և ահա կը հրաժարի, և թէ այս հրաժարականը բողոք կամ ինչ որ է, պէտք է մի և նայն զիրքին մէջ մնայ:

Գանք որ Պատրիարքին անձնական տըկարութեան պատճառին տակ լուծուցին դանդաղներ կան. որ ուրիշ բան չեն, բայց եթէ Հայաստանի հարատւարութեանց բարձման յարադրուի: Քանի որ այս պատճառը կայ ու կը կենայ, բանի որ իրողութիւնք որ քան զօր տեղի կունենան և եղած խոստումներն ապարդիւն կը մնան, ալ չուզէր խաբուիլ: Եթէ կրկին փորձ մ'ընել ուզենք, եթէ ամենա ալ երթանք խօսինք Մեծ եպարքոսին, ստոյգ է որ այնքան մեծ յարգանք կընդունի զմեզ որ մեր լեզուն պիտի լսեցնէ և ձեռնուհայն ետ պիտի դառնանք. բայց երբ առած խոստումնիս տանինք հաղորդենք Ս. Պատրիարքին, միթէ կը հաւատարմորէր որ պիտի համոզուի ու իր պաշտօնին գլխին անցնի. ո՛չ. կարելի չէ որ համոզուի: Ուստի բանի որ պարագաները բացառիկ են, պէտք է որ մեր ալ բացառիկ դարձան մը անօրինակք, այսինքն Փոխանորդ մը դնենք որ Պատրիարքին տեղ գործէ: Այցելութիւններ կան, զորս կատարել հարկ է. օրինակի համար Մահձետականայ վերջին տօնին աթիւ շնորհաւորութեան մարդ չգնաց: Իսկ Պատրիարքին հրաժարականը մնայ միշտ իրր բողոք, մինչև այն ատեն երբ Պատրիարքը տեսնէ որ բարենորոգումները կսկսին կատարուիլ և արդարութիւնը ի գործ դրուիլ այն ատեն միայն թերեւ օգուտ մը ունենայ Պատրիարքին ըսելիս թէ՛ որովհետեւ ահա ան ուղածներդ սխա՞ծ են կարգին դրուիլ, հրամայ պաշտօնիդ գլուխն անցնի: Ես չեմ

ըսեր թէ Երևանի Եփեսոսի ըսածն աւօրինաւոր բան մ'է, շատ օրինաւոր է. բայց անօգուտ պիտի ըլլայ և մեր նպատակին չպիտի հասնինք: Հետեւաբար պիտի դանք դարձեալ այն կէտին, որ Փոխանորդ մը դնել պէտք է. սակայն ո՞վ պիտի գծէ անոր սրտունը. ըստ իմ խօսն ժողովին պէտք է յանձնել. նա կը գծէ և կը բերէ: Այս նպատակաւ կը համոզանիմ Ս. Պատրիարք Հօր առաջարկութեան՝ Փոխանորդ մը դրուելու մասին:

ՁԱՅՆԵՐ. — Բուէ, քուէ:

ԵՌՆՍՈՒՑԵԱՆ Տ. ԷՑ. — Խօսք կուզեմ, երկու բառով սրտասխանելու համար այն զխտողութեանց, զորս թէ Մատթէոս Սրբազան և թէ Ներսէս Հայր սուրբն ըրին իմ խօսքերուս մասին:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Բիշ մը համբերեցէք, կողաչեմ Վիճարանութիւնը ճարտար. խօսութեան ասպարէզին մէջ շատ աղէկ առաջ կերթայ, բայց կարծեմ գործնական ճանքէն կը խտորի: Այս խնդրոյն մէջ կէտ մը կայ՝ որ ամենէն աւելի ուշադրութեան արժանի է, և որ ամենէն շատ ուշադրութեան կը վրիպի: Ս. Պատրիարքն պաշտօնական գրութիւնքը ոչ կը կնքէ և ոչ կատարագրէ. Գրան հետ Պատրիարքարանի յարաբերութիւններն գրեթէ դադարած են. այսօր Պատրիարքին գրեթէ քարոյքեանապիս է, զի նա կանէ կը տանի Նախարարաց ինչ որ գաւառներէն կուգան Պատրիարքարան, հեռադիր կամ հանրագիր հարտահարութեանց ևն նըկատմամբ. թագրի գրեղն վերցուած է. յանուն Պատրիարքարանի հեռագիր, յանձնագիր վճագիր ևն շտրուիր մէկուն. սեպհականութեան պաշտօնագրերն անկնիք դիպուած կը կենան դիւանատան արձանագրութեան սենեակը: Այս վիճակն անկարելի է շարունակել մեր Ս. Պատրիարքի ազգասիրութեանը զի մեցինք դարձան խնդրեցինք, անօգուտ եղաւ, մեզի միշտ կը պատասխանէ թէ տկար եմ, իմ տեղս մ.կր դրէք որ ազատիք. Գրան այ կըսէ

թէ Ձեր խոստումներով մինչև հիմա Ազգս խտրեցի, ալ այսուհետեւ չխտրուիր, ուստի չեմ կրնար շարունակել: Եթէ մեզի ըսածը միայն Գրան բերէ կամ Գրան ըսածը միայն մեզի բերէ, թերեւ զիւրութեամբ երբ մը կը գտնենք. բայց խնդրոյն արդի դրութեան մէջ գործերնիս դժուարացած է: Հիմա՛ Պատրիարքի հրաժարման վրայ վիճարանելու հարկ չունինք. բայց պատրիարքական սրտունալութեան համար եղանակ մը հնարելու պարտաւորութեան ներքեւ կը ճնշուինք. եթէ գործը միայն ազգային շրջանակին մէջ կատարուէր, զիւրին էր դարձեալ անօրինակութիւն մ'ընել. ժողովներ ունինք, Խորհրդական կայ, Փոխանորդ կայ, ասոնց կը յանձնուէր, ամեն բան կը լինար, բայց անդին Բ. Գրան մը կայ որու հետ յարաբերութեան մէջ գտնուելու պարտաւոր ենք. կարելի է անոր չիճանչուցած անոր ընդունել տալ Փոխանորդի մը գործադրութիւնքը. այս է խնդրոյն կարեւոր և փախուկ պարագայն:

Հիմա խօսն ժողովը 2 եղանակ ցուցուցած է մեզի, ո՞րը պիտի ընդունիք, անոր վերայ ամփոփեցէք խօսքերնիդ և ուշադրութեանէ մի վրիպեցունէք կողաչեմ ցոյց տուած քաղաքագիտական կէտս. կր ցաւիմ որ Երևանի Եփեսոսի խօսքի խառնուեցաւ. ասպարէտ է ոչ ես կուզէի անոր յանձնել Աթոք և բեմն երևել և իրր Երեսփոխան ազատօրէն խօսիլ խնդրոյն ամեն մէկ կէտերուն վրայ:

Տակաւին հինգ ատենախօս ունինք մտիկ ընելու. բայց սրովհետեւ քուէի ձայներ ըստեցան, ժողովին պիտի հարցնեմ, եթէ վիճարանութիւնը շարունակել ուզէ, խօսք պիտի տամ. եթէ ոչ, վիճարանութիւնը պիտի փակեմ:

ԵՌՆՍՈՒՑԵԱՆ Տ. ԷՑ. — Այդ որոշումէն առաջ խօսք կուզեմ փորրիկ զխտողութիւն մը ընելու համար. կողաչեմ որ խօսք շնորհուի ինձ:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ժողովին չհարցուցած ոչ մէկին խօսք չեմ կրնար տալ:

[Զայներ]

Վիճարանութեան փակումը քուէի զըրուելով, Ժողովն 3 քուէի ղէմ ստուար մեծամասնութեամբ որոշեց վիճարանութիւնը շտրունակել :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ — Խօսքը Եռուսեֆեան էֆէնտիինն է :

ԵՍԻՍՈՒՅԵԱՆ Տ. ԷՅ . — Ըսելիքս խիտ կարճ է, իմ առաջարկութեանս վրայ Մատթէոս սրբազանին և Ներսէս Հայր սուրբին տուած պատասխաններէն նշմարեցի որ իմ կարծիքս չեմ կրցած հասկըցնել և թիւրիմացութեան տեղի տուած եմ :

Իմ առաջարկութիւնս Խառն Ժողովոյ առաջարկութեան առաջին մասին հակառակ չէ, ես չուզեցի զայն աւելի պարզել, վասն զի տեսայ որ այն կը համապատասխանէ իմ առաջարկութեանս . եթէ փոփոխութիւն մ'այ կայ, չարժէր անոր վրայ վիճարանիլ :

Վիւանը թող շնորհ ընէ Խառն Ժողովոյ առաջարկութեան առաջին մասը կարգով :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ . — [Խառն Ժողովոյ առաջարկութեան Ե. մասը կարդայէ ետե] Ըսել է թէ Խառն Ժողովոյ առաջարկութեան Ա. մասն երեք կէտ կը պարունակէ .

Ա. քաղցրիներն ու ամուսնական դատերու իրաներն Խառն Ժողովոյ կնքել տալ :

Բ. կուսակարաց զրկուելիք հեռագիր և յանձնարարական, ինչպէս նաև ներքին գործողութեանց վերաբերեալ չըջարեականներն ու գրերը խորհրդակայն Սրբազանի ասորագրել տալ :

Ե. Գ. Ազգային վագֆաց վերաբերեալ կալուածագրերն Փոխանորդարանի կնքով վաւերացունել :

Ահա այս երեք կէտերն են զոր Եռուսեֆեան էֆէնտիին կուղէ ընդունիլ : Բայց ասանք այնպիսի տրամադրութիւններ են որ բաւական չէ որոշել, այլ Բ. Գրան ալ ծանուցանելու և հաճութիւնն առնելու է . զի եթէ

քաղցրիներուն վրայ փոխանակ Պատրիարքարանի, ուրիշի մը կնք տեսնէ և զայն կանխառն ճանչցած ու ընդունած չըլլայ, կրնայ մերժել զանոնք : Նմանապէս եթէ Էֆէնտիին փոխանակ Պատրիարքի որ ընդհանուր միութեամբ է Ազգիս, Փոխանորդարանի կընդունէ տեսնէ կալուածագրի մը վրայ, կրնայ մերժել ստացողին սեպհականութեան իրաւունքըն . և այս կերպով մենք մեր նպատակէն վրիպած կըլլանք . զի մեր միտքը քմածին տրնորէնութիւններ ընելով Նախարարութեան հետ Ազգին յարաբերութիւնները խանգարել չէ' : այլ այնպիսի գործնական եղանակ մը գտնել որ ներքէ մեզ պահել մեր Սրբազան Հայրն իր Պատրիարքական ակնարկն վրայ և Նախարարութեան հնարաւոր ընէ Ազգ գործերն իս անորինն առանց Պատրիարքի փոփոխութիւն պահանջելու . և միանգամայն հարկադրէ նմա ջանալ բառնալ Պատրիարքի հրաժարման պատճառները, որպէսզի վերջանայ նաև Պատրիարքական վարչութեան այս նորօրինակ ձևը և ընդ նմին Ազգին տրաւունջն ու շրժ գոհութիւնը :

Խօսքը Փոխադեան էֆէնտիինն է :

ՓԱՓՈՒՅԵԱՆ Ս. ԷՅ . — Ներսէս Հայր սուրբը բան մ'ըսաւ . այն է թէ Մտնեռտակայնայ վերջին տօնին առթիւ տեղի ունեցած ընդունելութեան մեր Պատրիարքը ներկայ չգլտնուեցաւ և ըսել ուզեց թէ ասանկ պարագայ մը նորէն պատահած ատեն Ազգին կողմէ գացող մէկը չպիտի կրնար գտնել : Անցեալներս Կայսերական պալատան մէջ այդպիսի ընդունելութիւն մ'եղաւ նոր տարւոյ առթիւ . դեսպանք և Տէրութեան բոլոր բարձրաստիճան պաշտօնատարք և իւլէմայք ներկայ էին . Պատրիարքները ներկայ չէին . հարտակ աղքատ գլուխներուն բացակայութիւնը բաւական աչքի դարկած էր :

Ահա այդ իսկ է անհասարկութեան խընդիրը . Տաճկի իւլէմաներն ուր որ գտնուին հոն պէտք է գտնուին Հայոց, Յունաց և ուրիշ հարտակ աղքատ կրօնական գլուխներն : Հաւասարութեան չգործադրուելուն և միւս

կողմանէ հարտահարութեանց աւելի ևս ծանրանալուն համար է որ մեր Պատրիարքը կը հրաժարի : Փախար յայտնեցինք որ այս հրաժարականն ետ առնու . քաղարական սխալ մ'է այս, զոր գործեցինք . վասն զի եթէ ըստայ է որ Ս. Պատրիարքը պատճառարանեալ հրաժարական տուած է Բ. Գրան բողոքելով հարտահարութեանց դէմ, ինչպէս որ ստոյգ ըլլալը գիտենք, տեղի չկար մեզ ըսել իրեն թէ Չեր աղքատիութեանը կը զիմենք, ետ առ հրաժարականդ : Եթէ իրրև հասարակաց սիրելի Հայր՝ իր վրայ ունեցած մեր յարգանայ տրտայայտութիւնն էր զոր ըրինք, շատ բաւ եղաւ որ ինք հաստատ կեցաւ իր հրաժարականին վրայ : Բոլոր մեր ջանքերը անկարելի ըրած են իր հրաժարականն ետ առնել տալ . որ կը նշանակէ թէ համոզմամբ տուած է իր հրաժարականը . պէտք է գոհութեամբ նկատենք զայս : Բայց գրքին միւս կողմը դառնալով արդեօք կրնանք ընդունիլ այս հրաժարականը . ո՛չ . զի բողոք մ'է այն և պէտք է մնայ իրր բողոք : Սակայն չկարծենք թէ ասի անշուշտ դարման կրնայ ըլլալ մեր ցաւերուն . ոչ Ս. Պատրիարք Հօր հրաժարականը, ոչ այս կամ այն կողմ պատգամաւոր զրկելը կրնան Ազգին բողոքանայն համաձայն Հայկական խնդրոյն լուծումը փութացնել . այլ պէտք է որ թարբխարնակ երբ միլիոն և օտարաբնակ երկու միլիոն Հայերն գործակից ըլլան Հայկական խնդրոյն . այն ատեն ասահով ըլլանք որ մեր խնդիրն կրնայ յաջող լուծում մ'տանալ :

Կը յիշէք Աշտարակեցի Ներսէս Ե. կաթողիկոսը, որուն «պաշտօնական հայրենեաց» տխուր տրուած է, և զոր կորհներ անդադար . ինչո՞ւ . վասն զի Ներսէս կաթողիկոս Հայկական անկախութեան համար աշխատած է . ուստի այժմ երբ կորհներն ու կը յարգենք Ներսիսի յիշատակը, Հայկական անկախութեան յիշատակն օրհնած ու յարգած կըլլանք և Ներսէս կաթողիկոսի անունով Հայկական անկախութիւնը կը հասկնանք : Այսպէս ալ

Ներսէս Պատրիարք Հայկական խնդրինութեան համար աշխատեցաւ . ուստի զիմքը կը յարգենք և կը սիրենք, վասն մեր խնդրինութիւնը կը սիրենք և անոր կը փախարինք . և Ներսէս Պատրիարքի անունով Հայկական խնդրինութիւնը պիտի հասկնանք : Ներսէս կաթողիկոս իրրև մարդ սխալներ ունեցած է թերևս . նոյնպէս Ներսէս Պատրիարք . սակայն երկուքին անունն ալ Հայկական խնդրոյն հետ կապուած ըլլալով, պարտիք զիրենք սիրել և օրհնել : Մանաւանդ թէ ազգային հանրական խնդրոյ մէջ ազգային մասնական և կամ անձնական խնդիրներ պէտք չէ որ մուտ գտնեն . զոր օրինակ . ևս ի մասնաւորի Ներսէս Պատրիարքի վրայ կրնամ քննադատութիւններ ունենալ . սակայն Հայկական խնդրինութեան խնդրոյն առջև ամեն պարտութիւն պէտք է խոստովանիմ . ուստի և ներկայ հրաժարականը չընդունիլը Ազգին օգուտ կը նկատեմ և ասով խղճի պարտաւորութիւն մը կատարած կըլլամ : Բայց ո՞րչափ ժամանակ չընդունիլ . եթէ հարկ ըլլայ, մինչև քսան տարի չընդունիլ, և այնպէս պահել զինքը :

Այժմ դառնանք գործնականին : Կըսեն մեզ թէ ընթացիկ գործեր ունինք, ո՞վ պիտի գործադրէ . մէկը պէտք է որ կնքները ստանէ և գործածէ և պատասխանատու ըլլայ : Այս մասին Խառն Ժողովոյ առաջարկած Փոխանորդի ընտրութիւնը կընդունի՞ր որ ընթացիկ գործերը անօրինէ :

Ես ասկէ առաջ առժամանակեայ Տեղապահ մը դնել առաջարկեցի . բայց կատարելեն թէ Տեղապահ մը դնելով, կերպիւ իւրիք Պատրիարքին հրաժարականն ընդունած կըլլանք . ես ալ համոզուեցայ, և Փոխանորդ անունով մէկը դրուելուն համաձայն եմ : Պիտի ըսուի թէ Փոխանորդ մ'ունինք արդէն . պէտք է գիտնալ թէ Յայները մեծ և փոքր փոխանորդներ ունին . մենք ալ փոքր փոխանորդ մ'ունինք արդէն, մեծն ալ այժմ կը դնենք : Ուշադրութեան արժանի կէտ մ'ալ

սա է թէ ո՞վ պիտի ընտրէ զայդ Փոխանորդը Խառն ժողովը կընտրէ Տեղապահը . որոյ պաշտօնը տեղաւորին չունի, այլ միայն Պատրիարքի ընտրութեան համար է . դարձեալ Խառն ժողովը կ'ընտրէ Պատրիարքի փոխանորդը, որ անոր իշխանութեան տակ կը գործէ . սակայն այժմեան դրուելիք Փոխանորդը բացառիկ Ազգային ժողովիս ալ պիտի նստագահէ, և Բ. Գրան յարարերութեան միջնորդ պիտի ըլլայ . ուստի լաւ է որ Ազգային ժողովս ընտրէ զանի : Իսկ եթէ Խառն ժողովն ալ ընտրէ, այս ժողովը պէտք է զայն ներկայէ Բ. Գրան : Վանազի Խառն ժողովն արդէն Բ. Գրան յայտարարութիւն մ'ըրած է թէ Ազգը չընդունիր Պատրիարքին հրաժարականը, այս ժողովն ալ պէտք է այս առթիւ ընէ այդ յայտարարութիւնը, և միանգամայն ծանուցանէ թէ առժամանակեայ կերպիւ այս պիտի անորէնութիւն մ'ըրած է, որպէս զի ընթացիկ գործերն երեսի վրայ չմնան, և Ներսէս Արքայան դարձեալ պիտի մնայ Պատրիարք, և կարևոր պարագաներու մէջ իր իշխանութիւնն ի գործ պիտի դնէ :

Եւ որպէս զի խնդիրները չչփոթենք, կառավարիկեմ որ կարգաւ բուէի դրուին և որոշուին :

1. Արքայան Պատրիարքին հրաժարականը մերժելու խնդիրը .
 2. Առժամանակեայ մէկը դնելու սկզբունքը, որ գործադրէ այն բաները, որոնցմէ ձեռք բաշած է Ս. Պատրիարքը .
 3. Այս դրուելիք անձին անունը .
- Ասոնք որոշուելէ յետոյ կը մնայ ընտրութեան եղանակը, այդ ալ յետոյ նկատողութեան կառնուի :

ԳԱՐԱԳԱՇ Ն. ԷՑ. — Բանի որ Ս. Պատրիարքը միևնոյն պաշտօնը չցուցնէր մեզ և Բ. Գրան, միանգամայն Բ. Գրան յարարութեանց մասին պաշտօնէ խոյս տալուն համար ժողովոյս կառավարիկութիւնը մը գործեր խորհրդակցանի ձեռք և քանի մը ևս Փոխա-

նորդի ձեռք կատարել տալ, մեր ասոնց և ոչ մէկը կրնանք ընդունիլ եթէ երէք Ս. Պատրիարքն առ Ազգն անեցած պատասխանատուութենէն ազատիլ ուզէ իր հրաժարականին առ կախ մնալովը : Այս սգաւ կը որ անցեալ տարի չիրցանք Խորհրդակցանի պաշտօնը ձանձնալ և վաւերացնել . վանազի տաղ մէկ պաշտօնի համար երկու պատասխանատու մարմին պիտի ձանձնար ժողովս . ուստի որոշեց ինք միայն ի գիտութիւն լսած ըլլալ Ս. Պատրիարքին այդ որոշումը, զգայունելով իր պատասխանատուութեան տակ գործող այդ խորհրդակցանի պաշտօնավարութեան հաշտ աչօք նայիլ ուղեւիս :

ԱՐԳ ԱՐԻՍՏՈՒՆ Պատրիարքը պատասխանատուութիւնն իր վրայ ըլլալով ինչպէս մինչև այսօր գործերն ուղածին պէս և չըստ արժանւոյն խորհրդակցանի և Փոխանորդին տեսնել տուած է, կրնայ ասիլ ետքն ալ տեսնել տալ, և այդ երկու առաջարկեալ միջոցներուն մէկը որ է խորհրդակցան, որն որ պաշտօնապէս ձանձնուած է Բ. Գրանէն, ինչպէս նաև Խառն ժողովը, կրնան ըստ պատշաճին գրել և կրել և փոխանորդել Արքայան Պատրիարքին :

ՄԵՐՆԵՄ-ԳՈՒԼԻ Յ. ԷՑ. — Ես քիչ մը ուշ հասած ըլլալուս համար խնդիրը լաւ չի հասկըցած . սակայն Փախազեան էֆէնտի պարզեց և հասկըցայ : Կը կարծէի թէ Փոխանորդ մը և խորհրդակցան մը միանգամայն պէտք ըլլալուն վրայ կը խօսուի, որ եթէ ըստոյգ ըլլար շփոթութեան մէջէն չպիտի կըրնայինք ելնել . սակայն հիմա հասկըցայ որ անանկ չէ եղեր :

Զայս հասկընալէ ետև կուզեմ այժմ զիտողութիւն մ'ընել : Մեր Պատրիարքը հրաժարեալ վիճակի մէջ սահել կուզենք, անոր համար որ ինչպէս Փախազեան էֆ. ըստ բողոք մ'է այս : Վասն զի Պատրիարքը կըսէ թէ ըստ սրում բարենորոգումները չեն գործադրուիր ի Հայաստան և Գուռը իր խառմամբը կը խարէ զիս, որով ես ալ զԱզգս

խորած կըլլամ, ուստի չեմ ուզեր որ այլևս խարեմ : Մեր ալ չենք ընդունիր Պատրիարքին հրաժարականը, գիտեալով որ իբր բազար պիտի մնայ այն, և այս բողոքին ծանրութիւնը թեթեւցնել չենք ուզեր . և աւելի ճիշդն քակելով դրացնել կուզենք զայն Բ. Գրան : Բայց ինչո՞վ պիտի յայտնենք ասիկա Գրան, յայտնի է թէ դրով մը : Միւս կողմէ Վարչութեան յանձններ որ ընտրէ Փոխանորդ մը, և այն արտօնութիւնները՝ զոր ներկայ պարագաները կը սահմանեն տալ Փոխանորդին, տեղեկագրէ մեզ, որ վաւերացնենք, և այն ատեն Բ. Գրան գրելիքնիս որոշենք : Ուստի ես կատարելապէս կընդունիմ Փախազեան էֆէնտի ըսածները, սստարեբութեամբ որ Խառն ժողովն ընտրէ զՓոխանորդը և Ազգային ժողովս արտօնէ ինչ որ պատշաճ կը դասի անոր իշխանութեան նկատմամբ :

ՄԱՄԻԿՈՆԵԱՆ Մ. ԷՑ. — Ես ալ պիտի համաձայնիմ Մէրեմ-Գուլի էֆէնտիին . բայց անկէ առաջ մէկ երկու խօսք ունիմ : Ս. Պատրիարքը կը հրաժարի և մեզ կը խտտանայ դարձեալ անպիտի ազգային գործոց մէջ : Իսկ Գրան կըսէ թէ ըստ սրում խտտացեալ բարենորոգումները չեն գործադրուիր, այլևս չեմ կրնար պաշտօն վարել : Բայց չեմ գիտեր թէ Գրան տուած հրաժարագրին իմաստն ճիշդ այդպէ՞ս է, զի պաշտօնական օրինակը դեռ չտեսանք :

Հիմա ես նորէն ասջի ըսածս պիտի կրինեմ : Եթէ Ս. Պատրիարքին իշխանութիւնը կատարելապէս վարող մէկը ընտրենք և փոխանորդ կամ անդապա՞ս՝ սրեւ անունով Գրան ներկայենք, անուշտ Գուռը գոհ պիտի ըլլայ, և Ս. Պատրիարքին առաջարկութիւնները յաւիտեան անգործադրելի պիտի մնան : Իսկ թէ որ բացարձակապէս յայտնենք Գրան թէ ըստ սրում Ս. Պատրիարքին առաջարկած բարենորոգումները չգործադրուելուն համար Նա կը բաշուի իր պաշտօնէն, և որովհետև Ազգն ալ չընդունիր Նորին հրաժարականն, ուստի ազգային գործոց առժամեայ անօրէ-

նութեան համար Խառն ժողովն՝ արտօնեալ է կրել պաշտօնական գրութիւնները, վստահ եղիք որ Բ. Գուռն երբէք չներէք և չընդունիր այս առաջարկութիւնը . վասն զի Ազգին համար եկեղեցական պատասխանատու կուզէ . ուստի այս անտեղութենէն ազատելու համար թերևս բարենորոգմանց գործադրութիւնը կը փութացնէ, որպէս զի Ս. Պատրիարքն ետ առնէ իր հրաժարականն : Բայց եթէ անպատճառ կը սահմանուի որ այժմէն գործադիր մարմին մը սահմանուի, և ասոր համար մինչև իսկ մեծ և փոքր փոխանորդ բաւերուն կը դիմուի, ինչո՞ւ համար չհաստատենք Լ. զօթեթ մը որ ժամանակաւ ալ կար Ազգին մէջ, որպէս զի Ազգին Բ. Գրան հետ ունեցած յարաբերութիւնները կատարէ մինչև Ս. Պատրիարքի հրաժարականին խնդիրը լուծուի : Ես չեմ կարծեր որ մեր եկեղեցական Հարք չը յօժարին այդ անունով աշխարհականի մը ընտրութիւնն ընդունիլ գէթ ժամանակի մը համար :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Քիչ մը առաջ վիճարանութեան փակումը քուէարկութեամբ մերժելով, ստեղծարանից շարքէն մնացած 5 հոգիի արտօնութիւն տուիք շարունակել, և սորա շարունակեցին : Հիմա վիճարանութեան փակումը կրինք քուէի պիտի դնեմ . բայց անկէ առաջ միջանկեալ ընթերցում մ'ունինք ընելիք . երկու զիր յիշեցիր, դանտք պէտք է կարգանք . մէկն է Ս. Պատրիարք Հօր տա Բ. Գուռն մատուցած հրաժարագրի սրածէնը, որուն մէջ պիտի տեսնենք թէ Նորին Արքայութիւնն ինչ քաջարտութեամբ պաշտպանած է Ազգին իրաւունքն առաջի Բ. Գրան և ո՞րքան բազարադիտութեամբ պատճառարանած իր հրաժարումը :

Նրկորդն է ժողովական հանրագրի մը ծրագիրը որ պատրաստուած է ժողովիս որոշումները Բ. Գրան հարցուելու համար և որոյ մէջ պիտի տեսնէր Ս. Պատրիարքի հրաժարականի նկատմամբ ժողովի աննուղղակի բողոքն և Պատրիարքական պաշտօնի մասին պատշաճ դատած անօրէնութիւններն :

1. Ս. Պատրիարք Հօր հրամարագրիկ պատճենք.

Հուզուրը մէայիմէվֆուրը Հազրէթի Սատարէթբէնահիլէ.

Մարուզը չաքէրի քէմինէլէրի տիր քի Պու ապաը տայիլէրի պա Իրատէի Սէնիէի հազրէթը փատիշահի Տէրսատէթ վէ թէվապիի էրմէնի Բաթրիքիլիլինէ մինդայրի իսթիհզագ նասպ վէ թային պույրուլուշ, վէ մաթլուպ օ վէճճ իլէ Իֆայի վազիֆէյէ վիճուտի չաքիրանէմ զայրի միւսայիտ պուլունտուղու հասէպիլիլէ, տիկէրինին ինթիխապ վէ նասպը խուսուսունը օլ վազըթ վիւքէլայի ֆիլիսամ Հազարաթընտան պաշգա պաշգա իսթիհզամ իթմիլ, վէ մուսիխէրէն տախի թահրիբէն վէ չիֆաէն թէքրիբի իսթիտա իթմիլ իսէմ տէ, սուտուր պույրուլան էմրը ալի, վէ միլլէթը չաքիրանէմին թալէպ վէ իպրամը իւզէրինէ, գապուլ վէ տէվամընա մէճպուրիլլէթը աճիզանէմ հասըլ օլմուշ իտի Անճագ վիճուտը չաքիրանէմէ թարի օլան զաաֆիլլէթ վէ իլլէթ եէվմէն ֆի եէվմէն թէզայիլա վէ թէքէսսիւր իթմէքտէ օլտուղունտան, վէ թաշրատէ միւթէվէթին էֆրատը միլլէթի աճիզանէմ սուի իսթիմալաթ վէ տիւրլիւ մէզալիմ վէ իթիսաֆաթ իւզիւնտէն զայէթլէ մաղտուր վէ բէրիշան օլուպ, սայէի ատալէթվայէի Հազրէթի Բատիշահիտէ բէֆահ վէ սատտէթի հալէ նայիլ օլմալարը զըմնընտա մաարուզաթ վէ միւսթէտիաթը չաքիրանէմին գարին գապուլ վէ իսաֆ պույրուլմասընա միւվէֆֆագ օլամատըղմտան, արթըգ Բաթրիքիլիք մէմուրիլլէթի միւթէնասը.

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻԻՆ,

Երբ ասկէ առաջ կայսերական բարձրը հրամանաւ Հայոց Կ. Պօլսոյ Պատրիարքութեան պաշտօնին կոչուեցայ անարժանաբար, բարձրապատիւ Նախարարաց դիմելով իւրաքանչիւրին առանձինն խնդիր մատուցի, որպէս զի իմ տեղըս ուրիշ մ'ընտրուի. վասն զի անձնական սկարութիւնս չէր ներէր ինձ այս պաշտօնն վարել արժանապէս: Մի և նոյն խնդիրն վերջն ալ կրկնեցի գրով և բանիւ, սակայն Բարձրագոյն հրամաններ և Ազգիս խնդիրն ու ստիպումն հարկադրեցին զիս ընդունիլ ինձ յանձնուած Պատրիարքական պաշտօնն և շարունակել զայն: Բայց ըստ որում այս միջոցիս մէկ կողմէ անձնական տրկարութիւնս կը սաստկանայ, և միւս կողմէ գաւառացի ժողովուրդս գեղձմանց ու բազմատեսակ հարստահարութեանց պատճառաւ ծայրայեղ թըշուառութեան և զրկանաց մոսնուած է, և Օգոստոսիառ Սուլթանին հովանուոյն ներքև՝ անոնց անդորը կեանք մը շնորհելու համար մատուցած թախանձագիւն խնդիրներս ընդունելութեան չեն արժանանար, ուստի անկարելի եղած է ինձ ա՛յլ ևս շարունակել Պատրիարքական պաշտօնը, և հարկադրեալ եմ հրաժարականս մատուցանել և կենացս օրերն անցնել աղօթելով Օգոստոսիառ Սուլթանին կենացը համար և մաղթելով որ Ամենակալն Աստուած Ձեր բարձրութեան և Տէրութեան նախարարաց զօրավիգն ըլլայ և բարեյաջողութիւն պարգևէ: Կաղաչեմ ուրեմն որ հրաժարականս ընդունելով հաճիք զիս ար.

նրն տէվամը, աճիզլէրի իշիւն միւսթէհիլ օլմուշ օլտուղու մուհաթ իլմը ալիի Հազրէթի Սատարէթբէնահիլէրի պույրուլուգտա, էւմրը չաքիրանէմի էտասի մէֆրուզ էօհտէի տայիանէմ օլան էտիլլէի խայրիէի Հազրէթի Բատիշահին ետա վէ թիգքեարի իլէ պէրապէր, Վիւքէլայի ֆիլիսամ Հազարաթընըն վէ Ձաթը Ատալէթսըֆաթ Խըտիվի էքրէմիլլէրինին միւվէֆֆագըյէթ վէ մուսալէնէթի Բէպպանիէյէ մազհար պույրուլմալէրի տալաթը խայրիլլէսինէ հասը վէ թախսիս իլլէմէք իւզրէ Բաթրիքիլիկի մէզքիւրտէն աֆ վէ իթլագըմ խուսուսունա միւսաաաաէի ալիլլէի Հազրէթի Վէքեալէթբէնահիլէրի մէպղուլ վէ շաեան, վէ հիւսնի նաղարը ալիի բահիմանէլէրի վէ թէվէճճիւհաթ սէնիլլէի ատալէթքեարիլլէրի Միլլէթի չաքիրանէմ իլէ հազըը տախանէմտէ քէմաքեան պիտիլիլ վէ էրզան պույրուլմասը նիլպաը պապընտէ վէ հէր հալաէ:

1296 մուհարրէմ 10
1878 դեկտեմբեր 23

2. Ազգային Ժողովոյ կողմէ Բ. Դրան մատուցանելի Հանրագրի մը Երագիր.

Միլլէթը չաքէրանէմիլղ Պաթրիկի Բուլթպէթլու Ներսէս Էֆէնտի տայիլէրինին կէչէնլէրտէ վուգու պուլան իսթիֆասը Պասը Ալի ճանլպի սամիսինտէն գապուլ պույրուլմամըլ օլտուղը միսիլլու, Միւշարիլլէյհ Հազրէթիլլէրինին Թախթը Ալի պախթը Օսմանիէ մինէլգատիմ տէրքեար օլուպ, մուճիպի ֆախը վէ միւսպահաթ օլան սատագաթը սամիմէսինտէն վէ Տէվլէթ ու Միլլ.

ձակել այս պաշտօնէն և շնորհ ընէք չղանալ Ազգիս և նուաստիս Ձեր դըթութեան ակնարկն և բարձր համակրութիւնն:

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻԻՆ

Հայոց Ս. Պատրիարքին՝ Ամեն Ս. Արքեպիսկոպոսին, Բ. Դրան մատուցած հրաժարականը ինչպէս որ Բ. Դուռը չը հաճեցաւ ընդունիլ, նոյնպէս և Ազգն չընդունեց նորին Սրբազնութեան հրաժեշտը՝ զոր տուած էր Ազգին. վասն զի նորին Սրբազնութիւնը առ փառաւոր Գահն Օսմանեան ի վաղուց անտի պանծանօք ցոյց տուած անկեղծ հաւատարմութեանը, և Պետութեան ու Ազգին

լէթ ուղղորնտա ճանտիւարանէ մէջ հուտ օլան սայ վէ զայրէթինտէն նաչի Միլլէթնէ ճիւմէմիդին խօշնուտիյէթինի իսթիհասալ իթմիշ օլմաղլէ, Միլլէթի աճիզանէմիդէ տախի վիւրմիշ օլտուղը իսթիֆասը Միլլէթնէ գաթա՛ գապուլ օլունմամըշ տըր :

Անճագ Պաթրիզի միւշարիլէյհ տայիլէրինին վիճուտնէ մէյտանտա պուլունան զաաֆիլյէթինտէն տօլայը հիշ տէյիլ իսէ պիւր միւտտէթ Միլլէթին մէսալիհի ճարիէսինին բույէթի քիւլֆէթինտէն վարէսթէ օլուպ վիճուտնէ թէտալիսինէ պագմագ իւզրէ, զիլրաէ էսամիի շաքիրանէմիդ մուհարրէր օլան ումում մէպուսան Միլլէթ Մէճիլիսի վէ Պաթրիզիսանէ Բուհանի վէ ճիւմանի մէճիլիսիլի ազալարը պիլ իճթիմա իզթիզասը լէտէթ թէէմմիւլ, Պաթրիզիլի մէմուրիլէթի միւթէնասը քէմաքեան ներսէս էֆէնտի տայիլէրինին էօհտէի իսթիհասալէրինտէ գարմագ, վէ լէտէլհաճէ մէվատտը մուհիմմէ վէ նազիքէ հագգընտա Մագամաթը իւլէայէ մարուզաթ վէ միւսթէտիյաթընը տէվամ իլլէմէք իւզրէ, ֆագաթ մէճալիսէ ըիյասէթ խուպ մէսալիհը ճարիէի միլլիյէի բույէթ վէ թագարիը վէ էվրագը բէսմիէի թէմհիը իթմէք վէլհասըլ Պաթրիզի միւշարիլէյհէ վէքեալէթ իլլէմէք իշիւն մինասիպ պիւր Չաթըն Վէքիլ թայեին օլունմասընա գարար վիւրիւմիշ, վէ էհիլիլէթ ու իսթիզամէթի տէրքեար օլան . . . էքսէրիլէթ արաիլէ Պաթրիզ Վէքիլի ինթիխասպ գըլընմըշ օլմաղ իլէ. Միւշարիլէյհին վէքեալէթը մէգքիւրէյէ նասպ վէ թայեինի խուտուընտա միւսասատէյի Սէնիլէնին պիտիլիլ վէ էրզան պուլըլմասը պապընտա վէ հէր հալտէ, ևն :

համար ի գործ դրած անձնուէր ջանից պատճառաւ ընդհանուր Ազգին գոհունակութիւնը կը վայելէ : Սակայն ըստ որում նորին Սրբազնութիւնը տկար է անձամբ, և հարկ եղած է գէթ ժամանակ մը Ազգին առօրեայ գործոց տեսչութեան զբաղմունքէն ազատ մընալով գարմանել իւր անձը, ուստի ստորագրեալ անդամք Հայոց Երեսփոխանական և Վարչութեան կրօնական ու Քաղաքական Ժողովոց՝ գումարուելով յետ խորհրդակցութեան՝ որոշեցին որ Պատրիարքական պաշտօնը մնայ գարմանել ներսէս Սրբազանի վրայ, և ի հարկին կարևոր և փափուկ խնդրոց համար շարունակէ իւր խնդիրներն ու առարկութիւնները ներկայացնել Բարձրապատիւ Պաշտօնէից, սակայն Ժողովոց նախագահելու և Ազգին ընթացիկ գործերը վարելու, և թագրիւններն ու պաշտօնական գրութիւնները կնքելու, վերջապէս նորին Սրբազնութեան փոխանորդելու համար արժան գատուեցաւ ձեռնհաս Փոխանորդ մը կարգել, և յատենի Երեսփ. Ժողովոյ քուէից առաւելութեամբ այս պաշտօնին ընտրուեցաւ . . . որու արժանաւորութիւնն ու հաւատարմութիւնը յայտնի է արդէն, Հեաւաբար խնդրելով որ հաւանութիւն շնորհուի յիշեալ անձին Փոխանորդական պաշտօնի կարգուելուն, մնամք ևն :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ . — Հիմա կը մնայ ինձ ձեր կամըն իմանալ թէ կուզէ՞ք տակալին վիճարանութիւնը շարունակել : Վասն զի նորէն երկու հոգի խօսք ուզող կայ, եթէ ոչ, բաւ կը համարիք խօսուածները և կընդունիք փակել վիճարանութիւնը :

Անմիջապէս վիճարանութեան շարունակութիւնը կամ փակումը քուէի դրուելով, 4 քուէի դէմ ստուար մեծախանութեամբ փակումն ընդունուեցաւ :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ . — [Թարուակերպ] Հիմա որ վիճարանութիւնը փակեցիք, քուէարկութեան սիտի ձեռնարկեմք, բայց ի՞նչ կերպով : Չեր վիճարանութեան երեւան հասած և ամենուզ ընդունելի երեւած կէտերն սա երկուքն են . Ա. Սրբազան Պատրիարքին հրաժարականը չընդունիլ, և հաստատ պահել զՆա Պատրիարքական Աթոռին վրայ թէ և շարունակէ Բ. Գրան առջին հրաժարեալ նկատուիլ : Բ. Սրբազան Պատրիարք Հայոց Պատրիարք մնալով հանդերձ հանգիստ տալ նմա, յանձնելով Պատրիարքական պաշտօնի վերաբերեալ գործերը Տեղապահ կամ Փոխանորդի մը ինչպէս Ն. Սրբազնութիւնն ալ կը հրամայէ, և կամ բաժնելով դասնք Խորհրդական եպիսկոպոսին, Փոխանորդ վարդապետին և Վարչական երկուց Ժողովոց մէջ, որոց վրայ յաւելու կառավարիկ Լօղօթէթ մը Մամիկոնեան էֆէնտի Ահա այս երկու կէտերուն վրայ պիտի հրաւիրեմ զՉեզ քուէարկութիւն ընել . բայց եթէ քուէարկութեան կամ աւելի ճիշդ խօսելով խնդրոցն դուրսեանք վրայ խօսիլ ուզող կայ, կրնամ կանխաւ խօսք տալ միայն անոր վրայ :

ԵՈՒՍՈՒՅԵԱՆ Տ. ԷՖ. — Կարծեմ թէ Կանոնադրութեան համաձայն նախապէս քուէարկուելիքը Խառն Ժողովոյ բերած առաջարկութիւնն է, որ երկու մասերէ կը բաղկանայ, ետքը կուգան ուրիշ առաջարկութիւններ : Չմոռնանք նաև որ Ս. Պատրիարքն ալ կարծիք մը յայտնած է :

ՔԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — Ըստ որում ամենուս փափարն է չընդունիլ Ս. Պատրիարք Հօր հրաժարականն, և ըստ որում Նորին Սրբազնութիւնն իր կարծիքը յայտնած է, յարգանք մ'ընծայած ըլլալու համար պէտք է որ անոր կարծիքն ընդունինք :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ . — Խնդիրը յարգանք յայտնելու վրայ չէ, մեր յարգանքը կատարեալ է Նորին Սրբազնութեան համար, այլ ազգային գործերը վարելու օրինաւոր և գործնական միջոց մը, եղանակ մը գըտնելու վրայ է : Խառն Ժողովը երկու միջոց ցուցած է, որուն երկրորդին կը յարի Ս. Պատրիարքն ալ : Եթէ ուրիշ միջոց կամ բարեփոխութիւն տուաջարկող կայ, պէտք է գրով ներկայէ, որպէսզի կորգաւ քուէարկութեան ենթարկենք :

Սոյն միջոցին Մէրէթ-Գուլի էֆէնտի գրով ներկայեց իր առաջարկութիւնն, որուն յարեցան նաև Եռուստիան, Փափագեան և Խթիւճեան էֆէնտիները, և չորսը մէկէն ստորագրեցին զայն :

Նորնպէս Մամիկոնեան և Գարագաշ էֆէնտիներուն կողմէ մէյմէկ գրաւոր առաջարկութիւն մտտուցուեցան Գիւանին :

Ատենապետ փառան կարգաց միտա մի առաջարկութիւններն, որ 5 էին թուով Խառն Ժողովոյ 2 առաջարկութիւններէն սկսելով, ահաւասիկ .

1

Խառն Ժողովոյ առաջարկութեան Ա. մասը

Բ. Դուռը զրկուելիք թագրիւնները և ամուսնական խնդրոց իլամները կրօն, և Քաղ. Ժողովոց կնիքներովը կնքել, կուսակալաց և ուրիշ պաշտօնակալաց զրկուելիք թէ հեռագիր և թէ յանձնարարագիր Խորհրդական Սրբազանի կողմէն ստորագրել, ինչպէս նաև ներքին յարաբերութեանց վերաբերեալ պաշտօնագիր և շրջաբերականները, զո.

ըրս արդէն կատորագրէր Ս. Պատրիարք Հօր հրամանաւ . իսկ աղգային վագր-Ֆաց վերաբերեալ կալուածագրերն Պատրիարքական փոխանորդարանի կըն-քով վաւերացնել :

2

Բ. մասը .

Եպիսկոպոս մը Պատրիարքական Փոխանորդ կարգել . որպէս զի Պատրիարքական պաշտօնավարութեան վերաբերեալ բոլոր գործողութիւնները փոխանորդարար կատարէ , ջլուծումն Ամեն . Ս. Պատրիարք Հօր առ Բ. Դուռն մատուցած պատճառարանեալ հրաժարագրի խնդրոյն , և սոյն փոխանորդին պաշտօնավարութիւնը հաստատել տալ Բ. Դռնէն :

3

Առաջարկութիւն Մերեւել-Պուլի , Երուսաղեմ , Փափագեան , և Իրիսիան Էֆէնտիներու .

Ազգ. Ժողովս նկատողութեան առնելով Պատրիարք Ս. Հօր գրութիւնն ու վարչութեան Խառն Ժողովոյ տեղեկագիրը , կորոշէ

1 . Յանձնարարել վարչութեան Խառն Ժողովոյն Պատրիարքական Փոխանորդ մը կարգելով ծանուցանել Ժողովիս , որպէս զի արածնէ զնա առժամեայ կերպիւ Ազգ. Ժողովոյ և վարչութեան նախագահելու . Բ. Դրան հետ պաշտօնական յարաբերութիւնները շարունակելու և Պատրիարքարանի վճռագրերն ու Ազգ. Վագր-Ֆաց սէնէտները կնքելու .

2րդ Փոխանորդը կարգուելէ յետոյ նորա վերոյիշեալ արտօնութիւնները

գործադրական շրջանի մէջ մտնելու համար գրել առ Բ. Դուռն , որպէս զի Պատրիարքական հրաժարականին Ազգէն չընդունուած լինելը պաշտօնապէս հաղորդուած ըլլայ պատճառներովն հանգերձ :

Յ. Մերեւել-Պուլի Տ. Երուսաղեմ

Ս. Պ. Պ. Փափագեան Կ. Ս. Իրիսիան

4

Առաջարկութիւն Մ. Մամիկոնեան Էֆէնտի .

Կառավարիկեմ որ Բ. Դուռն յայտարարուի ի դիմաց Ազգ. Ժողովոյ որ Ս. Պատրիարքը իւր հրաժարականին վերայ կը պնդէ , տեսնելով որ բարենորոգմանց գործադրութիւնը կ'յապաղի . և որովհետեւ ինչպէս Դուռը նոյնպէս ընդհանուր Ազգը չի կրնար ընդունիլ Ն. Սրբազնութեան հրաժարականը , Խառն Ժողովը արտօնութիւն ընդունած է ըստորագրել ամեն թագրիւր և պաշտօնական գրութիւն մինչև ցկատարումն բարենորոգմանց :

Իսկ եթէ Ազգ. Ժողովը կը պնդէ որ մէկ անձ մը գործադիր ճանչցուի առաջի Բ. Դրան , կառավարիկեմ որ Լօղօֆէթական պաշտօնը նորոգուի մինչև ցնոր տնօրէնութիւն :

Մ. Մամիկոնեան

5

Առաջարկութիւն Ն. Գարագաշ Էֆէնտի .

Գանի որ Ս. Պատրիարքի հրաժարականը ժողովէս ընդունուած չէ և քանի որ Ն. Սրբազնութեան անցեալ տարի Ժողովիս ծանուցած Խորհրդակա-նը իր պաշտօնին վրայ կայ ու կը մնայ և

Ն. Սրբազնութեան զայն պաշտօնէ դադարեցուցած ըլլալը չեմք լսած , քանի որ պաշտօնապէս Փոխանորդ պաշտօնեայ մը կը ճանչնամք սահմանադրապէս և Խառն Ժողով մը ունիմք , կառավարիկեմ որ անոնց պաշտօնի սահմանները որոշուի . պաշտօնապէս պէտք եղածը Բ. Դրան ծանուցուելով :

Նաև Գարագաշ

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՏԱ . — Սոյն առաջարկութիւնները կարգաւ բուժարկութեան բովէն պիտի անցունենք . բայց եթէ կարօտութիւն կը տեսնէք , կը հրաւիրենք կարգաւ անոնց տէրերը համառօտակի բացատրել իւրաքանչիւրն իր առաջարկութիւնն :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ . — Խառն Ժողովը երկու առաջարկութիւն բերած է . մերն անոր երկրորդին կը համապատասխանէ . զի Խառն Ժողովը չըսէր թէ Փոխանորդը դուք ընտրեցէք , այլ միայն պէտքը կը ցուցնէ :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՏԱ . — Նախ Խառն Ժողովը պէտք է խօսի իր առաջարկութեան վերայ եթէ բացատրութիւն տալ հարկ կը տեսնէ , տեսնենք թէ իր առաջարկութեան Ա. մասին նկատմամբ հաստատ կեցած է իր կարծեաց վրայ , եթէ եղած վիճարանութեան վերայ զայն բոլորովին ձգած է և միայն Բ. ը կը բռնէ :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՏԱ Չ. ԷՖ . — [Ատենապետ Քաղ. Ժողովոյ] Վարչութիւնն առանց վերջապիս գումարուելու իր առաջարկութեանց ոչ մէկէն և ոչ միւսէն չկրնար ետ կենալ :

ՊԵՏԼԻԿՋԵԱՆ Ս. ԷՖ . — [Փոխ-Ատենապետ Քաղ. Ժողովոյ] Ըստ իմ կարծեաց , քանի որ առաջարկութիւնն իր երկուք է և Ս. Պատրիարք Հայրն անոնցմէ երկրորդը ընդունել է , մեք ալ անոր ընդունածը կընդունինք :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՏԱ . — Բայց ձեր Ատենապետը ուրիշ կերպ խօսեցաւ . Ազգ. Ժողովոյ բուժն պիտի մարբէ խնդիրը . սա' միայն հարկ կը համարիմ կանխաւ յայտնել թէ Խառն Ժողովոյ Ա. առաջարկութիւնը թերու-

թիւն մ'ունի . այն է թէ Բ. Դուռն երթաւ իր գրութեանց համար Վարչական Ժողովոյ և Վագրի կալուածոց համար Փոխանորդարանի կնիքը գործածել կառավարիկէ . բայց Բ. Դրան այս կնիքները ճանչցնելու և ընդունել տալու մասին բան մը չըսէր :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՏԱ Չ. ԷՖ . — [Ատենապետ Քաղ. Ժողովոյ] Այդ թերութիւնները տեսնելով է որ երկրորդ միջոց մ'ալ զրինք :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՏԱ . — Ինչ որ է , Խառն Ժողովոյ առաջարկութեան Ա. մասը բուժի կը զննեմ : Ով որ կրնուի ձեռքը վեր վերցնել չնորհ ընէ :

Չեռքերն անշարժ մնացին . իսկ հակափորձին բովանդակ ձեռքերն ամբարձան : Հետեւապէս Ժողովը միաձայնութեամբ ՄԵՐԺԵՑ Խառն Ժողովոյ առաջարկութեան Ա. մասն ամբողջապէս :

Այն ինչ Բ. մասն ալ բուժի զբուելու վրայ էր , Փափագեան Էֆէնտի , որ անմիջապէս յաջորդ առաջարկութեան ստորագրողներէն մին էր , խօսք առաւ :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ . — Ներեցէք որ ըսեմ . Դիւանի բրածին մէջ սխալ կոյ . կանխաւ ըսիք թէ իւրաքանչիւր առաջարկութեան աէր պիտի խօսի և պիտի լուսարանէ . կարգը Խառն Ժողովին տուիք , բայց մեզի խօսք չը տուիք . և ստանց մեր բացատրութիւնները լսել տալու բուժի կը զննէք : Հիմա թէ որ Խառն Ժողովոյ առաջարկութեան Բ. մասն ընդունուի , մերն ետ պիտի մնայ . թերեւ մենք այնպիսի լուսարանութիւններ պիտի տայինք որ Ժողովը մերն ընդունէր : Ուստի շօթութեան տեղի չմնալու համար նախապէս խօսք տուէք մեզի , որ մեր առաջարկութիւնը բացատրեմք :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՏԱ . — Փափագեան Էֆէնտի եթէ իր ընկերներով ստորագրած առաջարկութիւնն իր բարեփոխութիւն ներկայացունէր , անշուշտ անկէ պիտի սկսէինք բուժարկութեան , բայց նա իր առանձին առա-

րեան խառնուկան ժողովով առժամանակեայ Փոփանորդ մը կարգեցինք : շնորհ ըրէք տնոր պաշտօնին հաստատութեան իրատէն տալ : Ի՞նչ կը վախնար, միթէ Փոփանորդին իրատէն խնդրելով Պատրիարքին հրաժարականն ընդունած կըլլանք, ո՞չ ապարէն պիտի գրտի բացարձակապէս թէ հրաժարականն ընդունուած չէ և թէ փոփանորդին կարգումը առժամանակեայ է, ինչպէս քիչ մը առաջ կարգացուած ծրագրին մէջ նշանակուած էր: Եթէ կը կարծէք թէ բաւական է որ մենք ծանուցանենք, Գուռն անմիջապէս կընդունի, կը ԼՄ մընաց, կը սխալիր: Ա՛շտ զորութիւն ըրէք կառուցեմ այս փախուկ կէտերուն, և գիտցէ՛ք նաև թէ ինձ անկարելի է ձեզ համակերպիլ եթէ պիտէք Գրան հաստատութեան մասին ձեր առաջարկած եզրանակին վրայ: Բայց ես կը տեսնեմ թէ խնդիրը տակաւին խակ է, և իմ դիտարութեանս ոչինչ ըսելիչ չհասկցաւիր, գէթ յանձնախումբ մը ըրէք՝ որ խնդիրն ի մաստաարիւ է և հասուն կերպով տեղեկագիր բերէ ժողովիս առաջնիկայ նիստին :

ՄԵՐԵԿԻՄ-ԳՈՒԼԻ Յ. ԷՖ. — Երեսուցեան էֆէնդի Բայարութեանց վրայ մէկ քանի բառ ալ ես յաւելցնեմ :

Ի՞նչ տարբերութիւն կայ ժողովս ինք ընտրելուն և շնորհելուն մէջ. եթէ տարբերութիւն մը կայ, երևան հանենք. մէք ատոր զիստան ու օգուտը շտեանք, եթէ տեսնուց կայ թող ըսէ, և եթէ չկայ, այդ խնդիրը գոյցենք: Խնդիրն անոր վրայ չէ, թէ գրեհք նէ պիտի ընդունի՞ Գուռն ոչ, մեր քննարկածն այդ չէր. եթէ ատոր մէջ մութ կէտեր կը նշու մարտին, և եթէ մեր առաջարկութեան ի մասաը չփոխելով ուրիշ մը խմբագրուի, կընդունինք. բայց թէ ինչո՞ւ չեն ճշդուեր, խօսեցանք արդէն, նորէն խօսիմ: Եթէ կարգուե լիք փոփանորդին կարգուցու ըլլալն անհրաժեշտ է, Ա՛րչութիւնն ինք աշատ է կարգու կարգու մ'ընտրել. ինչպէս որ իր առաջարկութեան մէջ ալ նշանակուած է արդէն, ատի իր գիտնալի բանն է :

Մէք հոս փոփանորդ մը ընտրած ատենինս,

Լօղօթէթի առաջարկութիւնը նկատուածեան ատենու բաց դուռ մը կուսենանք. այս էր պատճառն որ մէք կարգուցու բառը զնել չուզեցինք. մեր առաջարկութեան մէջ. և թէ որ վարչութիւնն ինք կարգուցու չընտրէ և մեզի բերէ, այն ատեն ալ կրնայ խորհրդածուիլ այդ կէտը :

Կը մնայ թէ ինչո՞ւ փոփանորդին ընտրութիւնն առաջ արտօնութիւնը չենք գծած և ետքի ձգած ենք. պատճառն ուրիշ բան չէ, բայց եթէ ճիշդ այնպէս հասկըցած ենք ինչպէս որ Պատրիարք մը ընտրեցէք կըստի: Չեմ կարծեր որ հոս ալ ուրիշ մութ կէտ մը մնացած ըլլայ :

Գարով Գրան հաստատութեան կէտին, համարին թէ մենք ծանուցինք Գրան և նա չընդունեց, և յետ դարձուց մեր հանրագիրը. այն ատեն տեսնելով որ այս միջոցն անբաւական է եզեր, ուրիշ նոր միջոց մը կրնանք փնտռել, հիմակուծէ հարկ չըլլայ որուն, կարելի է որ Գուռն անխօսակ կընդունի Թէ որ ասանկ չընենք, ելինք Գրան ըսենք որ ճանչցիր և վաւերացու, ու չվաւերացնէ նէ, դարձեալ մի և նոյն վիճակին մէջ կը մնանք :

ԱՍԵՆԱՊԵՏ ՓԱԵԱ. — Այդ բացատրութեանց վրայ ալ խնդրոյն դրութիւնն կատարելու պարգուած չեմ տեսնել: Նախ՛ դուք կըսէք որ եթէ Ա՛րչութիւնն կարգուցու մ'ընտրէ, ըստ. եթէ չընտրէ դարձեալ այդ կէտը խորհրդածութեան կրանենք: Կը հարցունեմ ձեզ միթէ խոհեմութիւնն է այսպիսի ծանր պարագայից մէջ այս կերպիւ վարուիլու ելիլ ըստ չէ՞ բացարձակապէս որչեղ թէ սակամ նա պաշտօնով կարգուցու մը պիտի ընտրուի պատրիարքական փոփանորդ :

Երկրորդ կըսէք թէ քանի որ պաշտօնն առաջուց գծեր ենք, և արտօնութիւնն ետքէն պիտի տանք, ընտրութեան մէջ դժուարութիւն կամ շփոթութիւն չկրնար մտնել, բայց փոփանակ այս մասնուածոյ ընթացքին ի՞նչ արդեք կայ պարգուցէ սահմանել պաշտօնը, որչեղ արտօնութիւնները և այնպէս ձեռնարկել ընտրութեան Գուռն խորհրդական մ'ու-

նիր արդէն, որոյ ընտրութեան ժամանակը չուզեցիր հաստատել իշխանութիւնը, նա ձեր ամեն գործերը կը տեսնէ, չընէր ի ժողով անգամ կը դուրսդէր, բայց չկրնար նախագահել, չի չճանչցար զինքը: Ա՛տենք քաղաքագիտական սխալներ են. այսու հանգեւրձ դուք դարձեալ այս անգամ ալ այդպէս կը վարուիք եզեր, ատոր ես չեմ կրնար զիմադրել, բայց համաձայնելու ալ պարտաւոր չեմ: Գարով երրորդ և վերջին կէտին, որ է Գրան հաստատութեան խնդիրը, եթէ չէք ուզեր որ Ա՛րչին գործերը դժուարին դիրքի մէջ մըտնեն, նախ հաստատութիւնը խնդրեցէք նորընտրելի Փոփանորդին և այնպէս զրէք զնա Գրան հետ յարտերութեան մէջ: Ա՛տոր հետ մէկտեղ Պատրիարքի հրաժարման խնդրոյն նախանձախնդիր եղիք. բողոքե՛նք անոր հրաժարման դէմ, որով բողոքած ըլլանք անոր հետ հարատաւարութեանց շարունակութեան և բարեհարգմանց յարգումն զէմ :

ԵՌԵՄԻԱՅԱՆ Ս. ԷՖ. — Ընտրուելիք Փոփանորդին վաւերացման համար Բ. Գրան իրատէ խնդրելու կէտին մէջ կը տարբերինք մեր և ձեր վաւերութիւնը. քանի որ այս մասին համաձայն չենք, եթէ կը հաճիք՝ թողունք այս կէտը մինչև յառաջնիկայ նիստ, ազէկ մը սերտենք և ետքը քուէարկենք: Սաչափ խօսուելէ ետև ես տակաւին չհամարուեցայ թէ այս կէտին նկատմամբ մեր ըսածին մէջ տարբերակութիւն կայ :

ՁԱՅՆԵՐ. — Քուէ, քուէ :

ԱՍԵՆԱՊԵՏ ՓԱԵԱ. — Այս խնդրոյն մէջն ելնելու համար եթէ կը հաճիր, սկզբնական կէտերը մի առ մի թուենք և քուէարկենք: Առաջին սկզբնական կէտը սո՛ւ է թէ Սրբազան Պատրիարքին հրաժարականը չընդունելով հանգերձ Ա՛րչոյն գործոց տեսչութեանը համար Փոփանորդի մը պէտք ունինք: Երկրորդ կէտն է այս տնօրէնութեան գործադրութիւնը Փոփանորդն անշուշտ Ա՛րչը պիտի ընտրէ, բայց Բ. Գրան պէտք է հաստատուի որպէս զի կէտ եղեալ նպատակին համար : Ի Բայց այս հաստատութեան

կէտին մէջ՝ մէկ կողմէն զգուշանալու է որ Ս. Պատրիարքին հրաժարականն ընդունածի պէս վարուած չըլլանք, և միւս կողմէն ձեր պահատութեամբ խնդրոյն խորն ալ չկորսընցան ենք, և այս է երրորդ և փախուկ կէտըն սկզբնայ :

Ըստ խոսակցելոյ որ Փոփանորդ մ'ընտրելու սկզբունքը նախ քուէարկելը և որչէք և ապա Յանձնաժողովի մը յանձնէք որ անոր անձնական հանգամանքը, սրաչտօնը, արտօնութիւնները, ընտրութեան եզրանակը, հաստատութեան կերպը և ուրիշ պարագայները սահմանելով ծրագրի մը բերէ մեզ :

[Հաստատուեալ ցայցեր]

Ուրեմն քուէի կենթարկեմ նախ՛ Սրբազան Պատրիարքը պատրիարք մնալով հանգերձ, Պատրիարքական գործերը տեսնելու համար Փոփանորդի մը պէտքը. ս՛վ որ կ'ընդունի զայս, ձեռքը վեր վերցնել շնորհ ընէ :

Ժողովը միաձայն քուէով ընտրեց Գ. Պատրիարքի մը հաստատութեան պէտքը :

ԱՍԵՆԱՊԵՏ ՓԱԵԱ. — Հիմա կը մնան միւս պարագայներն որոշել, այսինքն թէ՛ Փոփանորդն ի՞նչ կարգէ և աստիճանէ պէտք է ըլլայ, պաշտօնն ի՞նչ պիտի ըլլայ, ս՛վ պիտի ընտրէ և ս՛վ պիտի հաստատէ գնա : Կ'ուզէ՞ք յանձնախումբ մը ընել, որ յառաջնիկայ նիստին տեղեկագիր մը բերէ մեզ սոյն կէտերուն վրայցք : Եթէ կընդունիք անդամներն ուրչեցէք :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Խորհրդարանական Յանձնախումբ մ'ունինք արդէն. այս գործն ալ անոր յանձնենք, ինչո՞ւ ժամանակ զոհենք նոր մ'ընտրելու համար :

ԻԻԹԻՃԵԱՆ Կ. ԷՖ. — Այս գործն զբարդ առաջարկութեանց տէրերուն յանձնել կառաջարկեմ :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Ես վարչութեան յանձնել կառաջարկեմ :

ԵՌԵՄԻԱՅԱՆ Ս. ԷՖ. — Գրանը թող անուանէ Յանձնախումբը և մէք կ'ընդունինք : **ԱՍԵՆԱՊԵՏ ՓԱԵԱ.** — Գրանին բան մի

յանձնէք, գուցէ ան կողմնակալ ոգւով չը վարուի, զի ես յակամայից ստիպուեցայ զի. տողութիւն և կարծիք յայտնել ձեր առաջարկութեանց վրայ:

ՋԱՅՆԵՐ . — (Կ'ընդունինք, թո՛ղ Ղր. ւանն առաջարկէ Յանձնախորհրդի անդամներն) **ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ . —** Եթէ կ'ընդունիրք, ես կ'առաջարկեմ Չեզ Կարապետ Եպիսկոպոս Սերորեան, Շահապազ և Պոյաճեան էֆէնդանները:

Պատճառն ըսեմ, ինչո՞ւ այս անձինքն առաջարկեցի. Կարապետ Եպիսկոպոս շատ տարի փոխանորդութիւն ըրած է և քաջ զիտէ Ղրան հետ յարարերութեանց եղանակը: Շահապազ էֆէնդան լուսամիտ և համարուեալ օրէնագէտ մըն է. Պոյաճեան էֆէնդան նոյնպէս. ասոնք կոտորեալ կերպով կրնան լուստարանել խնդիրն և մեզ օրինաւոր և գործնական ծրագիր մը բերել:

ԵՈՒՍՈՒՑԵԱՆ Տ. ԷՑ . — Մենք չենք կրնար ընդունիլ այս կերպով. ինձ այնպէս կերել թէ այդ եղանակը խնդիրը չըսուելէ զոտ աւելի կերկարէ և դժուարութեան մէջ կը ձգէ: Աւելի դիւրին էր որ հակարածիք եզրու Երեւանիսաններն մէկտեղելով խօսին համաձայնի և Տեղեկագիր բերեն հաս:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ . — Գուք ըսել կուզէք թէ առաջարկութիւններ բերինք ձեզ և չընդունեցիրք. եթէ միանանք բերենք հարկաւ պիտի ընդունիրք. ըսել է որ ձեր իրաւախոհութեանը պիտի գոհնէք մեր բանադատութիւնը. այս չկրնար ըլլալ: Յանձնախորհրդ մը կը դրուի, եթէ նա հարկ տեսնէ, առաջարկութեան տէրերն այ կը կոչէ անկողնի կը տեղեկանայ և տեղեկագիր կը բերէ մեզ:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՑ . — Այս խնդիրը կրնար ընկալ այսօր. հարկ չկար Յանձնախորհրդի ձգել. ընտրութեան մասին մեր նպատակն այս էր որ յողովա չընէ, վարչութեանն դոյ ուղղակի և վաւերացուի: Գուով պաշտօնի մասին, սա երկու բառը բաւական է, շերտացիկ գործերը պիտի տնօրինէ. ասկէ աւելի մանրամասնութեանց հարկ չկայ. ընտրեալն

Եպիսկոպոս մ'ըլլայ ըսուեցաւ, ասոր դէմ զի. տողութիւն մը չկայ: Ուստի յողովը կրնայ հիմա վարչութեան յանձնել Փոխանորդին ընտրութիւնը: Գուով հաստատութեան կէտին, ըստ որում գույ նիստին մնայ ըսուեցաւ, վարչութիւնն ընտրել բերելէն ետե այս կէտին վրայ ալ այն ատեն կը խօսինք:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ . — Աղղային ժողովը մինչ ցայս վարչական մի միայն Փոխանորդի մը պէտքն ընդունած է քուէարկութեամբ. իսկ միւս կէտերուն համար ըստ որում գանադան են անոնց վրայ ձեր կարծիքները և միանգամայն դեռ իսակ կը տեսնեմ խնդիրը' և զՉեզ լի անվստահութեամբ, չեմ կրնար քուէարկութեան ձեռնարկել: Յանձնախորհրդ մը դիւրէք և առաջնորդ նիստին որոչեցէք ամեն բան:

ԵՈՒՍՈՒՑԵԱՆ Տ. ԷՑ . — Անվստահութիւն չկայ. այդ բառին դէմ կը բողոքենք, մեր ըսինք որ այն կէտերն' որոյ վրայ տարակարծիք ենք, մնան գալ նիստին. մինչև այն ատեն աղէկ մը սերտենք ըսինք. ասի կարծեմ ձեր վստասութեան կարծիքը յարգել էր:

[Երեսօտիսանք գրեթէ ամենևն ալ ստի վրայ]

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ . — Ըստ որում չէք ընդունիր անվստահութիւն ասնեալ թէ' և չէք ընդունիր Ղրանինն ձեր թախանձանաց վրայ առաջարկած Յանձնախորհրդ, հանգարտեցէք, նստեցէք, տեսնենք, փորձենք, կրնամք մի խնդիրը կէտ առ կէտ քուէարկելով այսօր վերջացունել, եթէ անբաւական չէ նիստերինս, զի կը տեսնեմ որ դացուներ կզան. . . .

ՋԱՅՆԵՐ . — Ոչ, ոչ, ոչ, բաւական ենք:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ . — [Շարունակելով] Շատ աղէկ: Առաջին և զլխաւոր կէտն էր Փոխանորդի մը ընտրութեան պէտքը, այն քուէարկութեամբ ընդունեցիրք և վերջացաւ: Երկրորդ կէտն է. Փոխանորդն անպատճառ Եպիսկոպոս ըլլա՞յ թէ ոչ, այս ալ քուէի կը դնեմ:

ժողովը միաձայն քուէով ընտրութեանն որ ընտրուելիք Փոխանորդն Եպիսկոպոս ըլլայ:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ . — Գանք պաշտօնին. խառն ժողովը առաջարկութեան մէջ Փոխա.

նորդի պաշտօնին սահմանն ընդարձակ է: «Պատրիարքի պաշտօնավարութեան վերաբերեալ բոլոր գործողութիւնները պիտի կատարէ» կ'ըսէ. Մէրեէ՛մ-Գուլէէֆէնտի և ընկերաց առաջարկութեան մէջ այս սահմանն սեղմուած է: «Ժողովա և վարչական ժողովոյ նախագահութիւն, Բ. Գրան հետ յարարերութիւն, և պաշտօնական դրոյ ստորագրութիւն». ասոնք միայն յատկացեալ են Փոխանորդին պաշտօն: Իսկ կարգացում Հանրագրին ծրագրին մէջ աւելի ևս բացատրութիւն տրուած է այս մասին «Պատրիարքը պատրիարք մնալով և չարկին նստէ փախուի և կարևոր խնդրոց համար պաշտօնէից իր խնդիրներն և առաջարկութիւնները շարունակելու իրաւունքն պահելով, միայն Ազգային ժողովոյ նախագահելու և ընթացիկ գործերը տնօրինելու և Պատրիարքական պաշտօնին փոխանորդութիւն ընելու պաշտօնով առժամանակեայ Փոխանորդ մը հաստատելը» կ'առաջարկէ. ես ալ այս կէտն այսպէս ձեր քուէին կ'ենթարկեմ:

ժողովը միաձայն քուէով ընտրութեանն Պաշտօնի մասն ալ Ատենապետ փաշայի յայտարարած վերջինն ձեռովը:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ . — Գուով ընտրութեան կէտին, երկու կարծիք յայտնուեցաւ. մէկն ուղղակի Ազգային ժողովէն և միւսը խառն ժողովէն ընտրել:

Տ. ՄԱՏՔԷՆՍ ԵՊՍ . — Եթէ խառն ժողովը ընէ ընտրութիւնը, ճիշդ Տեղապահի ընտրութիւն կատարած պիտի ըլլայ, զոր չենք կրնար ընդունիլ. զի մենք մեր Պատրիարքի հրամարականն ընտրուած չենք. և ըստ որում ընտրելի Փոխանորդը Ազգ. ժողովա ալ պիտի նախագահէ և Բ. Գրան հետ յարարերութիւն պիտի անենայ, պէտք է որ ուղղակի այս ժողովէն ընտրուի:

Անմիջապէս քուէի դրուելով ընտրութեան կէտն ալ, ժողովը 9 քուէի դէմ 21 քուէով ՈՐՈՇԵՑ որ ընտրութիւնն ուղղակի Ազգային ժողովէն ըլլայ:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ . — Կը մնայ վերջին կէտն, այն է Ղրան ծանուցանել և հաստատել թա.

լու կէտն: Ամենքս ալ դիտենք թէ Փոխանորդի ընտրութիւնը Ղրան ծանուցանել անհրաժեշտ է: Բայց տեսա՞կ մը ծանուցանել կայ, որ միայն ծանուցադիր զրկելով կըլլայ առանց օրին բան մ'ըսելու. ինչպէս որ մեր ընկերներէն կարծիք յայտնողներ կան: Մէյ մ'ալ կայ՝ որ ծանուցանելով հանդերձ հաստատութիւնը կը խնդրուի, Պորպէս զի յետ այնորիկ Ղրան հետ յարարերութեան մասնելու կարող ըլլայ. զի Ղրան չձանչցուցած և անոր ընդունելութիւնը չ'առած պաշտօնական յարարերութեան սկսելը անտարբեր հաճութիւնը չ'առած վարձեալ տան մէջ նորոգութեան կամ փոխախտութեան ձեռնարկել կը նմանի որ բանաւոր չէ: Բայց այս վերջին պարագային համար կասկած ընողներ կան որ թերևս այս եղանակաւ Պատրիարքի հրամարումն ընդունած կերևանք:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՑ . — Ըտտ որում ընտրութիւնը գալ նիստին պիտի մնայ, Ղրան ինչպէս ծանուցանելու կէտին վրայ պահ մը առաջ կարգացուած գրութիւնը [Չեր վստասութեան ըսած յանձնախորհրդ թող յանձնուի, նա պէտք եղած կերպով խմբագրէ բերէ գալ նիստին, և անոր վրայ վիճարանինք]:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ . — Լաւ, բայց ըսկը գրուելը կանխաւ որոշելու է. ծրագիր խմբագրելու կոչուած յանձնախորհրդ Չեր ընդէնած սկզբունքը զիտնայ. որպէս զի ըստ այնմ ծրագրէ. առանց ստոր ոչ որ յանձնառու կըլլայ աշխատիլ:

ՄԵՐԵՆԷՄ-ԳՈՒԼԻ Տ. ԷՑ . — Չեր վստասութիւնն ըսաւ որ Ղրան ծանուցանել երկու կերպով կըլլայ. մէյ մը պարզապէս ծանուցանելով և երկրորդ ծանուցանել և հաստատութիւնը խնդրելով:

Ես սա կերպով կը հասկնամ որ Փոխանորդին ընտրութիւնը և անոր տուած արտօնութիւնն իս պատճառներովն հանդերձ մանրամասնարար պէտք է ծանուցանենք Ղրան և խնդրենք որ ընդունի. սակայն ընդունի

կամ չընդունի, Փոխանորդը պէտք է իր պաշտօնը շարունակէ:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Այդ ինքզինքնիս խորքէ է. կաղաչեմ ուշադրութիւն ըրիք: Փոխանորդին պաշտօնը՝ զոր դժեցիներ, Պատարիարքի հրատարակած վրայ մեր տուած որոշումն ալ միտտեղ Ղուան ծանուցանելէ ետև պիտի խնդրենք որ ընդունի, այսինքն հաստատուէ զնա յայն պաշտօն ուր Ազգը կը կոչէ. ստոյգ է որ մինչև այս հաստատութեան իրատեսին դալը Փոխանորդը մեզի կը նախագահէ և ներքին գործերը կը տնօրինէ, բայց չկրնար Ղուան թագրիր զրկել: Ընտրուած օրէն մեզի համար ազգային շրջանակին մէջ Փոխանորդ է Պատարիարքի, Բ. Ղուան հետ յարաբերութեան ձեռնարկելու համար Ղուան ալ պէտք է զնա արտօնէ:

ԵՈՒՍՈՒՑԵԱՆ Տ. ԵՑ. — Տարբերութիւննիս այս է որ ձեր վսեմութիւնն իրատէ և Ֆէրման պէտք է դոյ կըսէ, մեր միայն Ղրան ծանուցանենք կըսենք առանց գործը իրատէի ձգելու:

[Խոսկներ]

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ըսի և դարձեալ կըսեմ. Փոխանորդն ընտրութեան օրէն կըրնայ ազգային շրջանակին մէջ գործել, բայց Ղրան հետ յարաբերութեան համար պիտի սպասէ Ղրան հրատարակած « իրատէի ալից » ըլլայ և կամ « իրատէի սէնից » կամ « ֆէրման » այդ Ղրան գիտնալու 'բանն է:

ՄԷՐԵԷՄ-ԳՈՒԼԻ Յ. ԵՑ. — Ես կըսեմ որ մեր Ղուանն իրատէ կամ Ֆէրման չունենք, ինք կուզէ նէ թող տայ:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Այս կէտը գործնականի վերաբերեալ է և շատ զգուշութեան կարօտ, որպէս զի սխալ բայլ չառնուի: Փոխանորդին պաշտօնը Ղրան ծանուցանելով հանդերձ հաստատութիւնը պէտք է խնդրենք այս է մեր ընկերքը. Ղուան ինչ կերպով իր հաստատութիւնը կուտայ նէ թող տայ: Ես ձեզ բաժնորցակ յայտնեմ թէ շատ զոհ կըլլամ եթէ իմ ըսած կերպովս գրեալ հան-

դերձ յաջողինք Ղրան ընդունիլ տալ մեր նոր տնօրէնութիւնը:

ՄԷՐԵԷՄ-ԳՈՒԼԻ Յ. ԵՑ. — Միայն « կուտայ » որ ընդունուի գրեթէ չըմտար:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Մենք ալ ուրիշ բան ըսած չ'ունինք. ձեր խօսքը զաղըմ կէլին բուխասթ իթանք կը թարգմանուի և ճիշդ մերինն կը հաստատասխանէ:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԵՑ. — Ահա արիւնք ևս գրով կուտամ քու տնօրէնութեան ձեռք:

(Եւ հետեւեալը մատուց Ղրանին որ կարգացուեցաւ.)

« Ծանուցանել Բ. Ղրան և խնդրել որ « հաստատէ, և մինչև այն ասան » ընտրեալն « Ազգային գործոց տնօրէնութիւնը կըսէ, և « Բ. Ղրան հետ յարաբերութիւնը կսկսի »:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Շատ բաւ, ստի քուէի կը գնեմ:

ՁԱՅՆԵՐ. — Այո՞ այո՞:

ՈՒՐԻՇ ՁԱՅՆԵՐ. — Ոչ, ո՛չ, մնայ գալ նիտին, զի մեծագոյն մաս չմնայինք:

Ատենապետ փաշա տեանելով որ օրը տարախաւած և անդամաց հետզհետէ մեկնելովը մեծագոյն մաս մնացած չէ, տաւանը դոյնց ժամը 10 1/2 ին:

Յաջորդ նիտը 15 օրէն ըլլալ պաշտօնացու Օրակարգ ունենալով՝

1. Ընտրութիւն Պատարիարքական Փոխանորդի.

2. Առաջարկութիւն Ղազարոսեան և Բախամանեան կ'իջնորդներու վասն ընտրութեան Քենիչ Յանձնախմբի.

3. Շարունակութիւն Պատեմէի վիճաբանութեան:

Ատենապետ Ատենապետ
Մ. Յ. ՄԷԼԻԲԵԱՆ Ս. ԱՍԼԱՆԵԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ԿՐԾՆԱԿԱՆ ԺՈՂՈՎ

1	Տ. Մկրտիչ	Ս. Արքեպ. Խորխոսեան	Ա. Ատենապետ
2	Տ. Խորէն	Ս. Նար-սէյ	
3	Տ. Կարապետ	Ս. Եղս. Աբրահամեան	
4	Տ. Մատթէոս	Ս. Իզմիրլեան	Բ. Ատենապետ
5	Տ. Ամբրոսիոս	Ծ. Վրդ. Ռուբինեան	
6	Տ. Ղարեպին	Ծ. Թաթարեան	
7	Տ. Եղնիկ	Ծ. Աղահունի (Առաջն. պաշտօնիս դուրս գացած)	
8	Տ. Իզնատիոս	Ծ. Շիշմեան	
9	Տ. Հայկակ	Ծ. Գիմարեան	
10	Տ. Ներսէս	Ծ. Ասլանեան	
11	Տ. Պօղոս	Ծ. Խօզոմեան	
12	Տ. Արիստակէս	Աւագ Բ. Տիգ. Մամբրեան	
13	Տ. Խորէն	» Փէկիվանեան	Բ. Ատենապետ
14	Սահակ	» Տ. Սարգսեան	Ա. Ատենապետ

ԲԱՂԱԲԱԿԱՆ ԺՈՂՈՎ

1	Առաքել	Կ'իջնորդ	Ա. Ատենապետ
2	Գէորգ	» Սթիմարանեան	Ա. Ատենապետ
3	Գէորգ	» Ղըլլեմեան	
4	Կարապետ	» Հաղարեան	
5	Լօղօֆէթ	» Պալեօղեան	
6	Մատթէոս	» Ալիբաբեան	Բ. Ատենապետ (Հրատարեալ)
7	Մարտիրոս	» Միւհէնտիսեան	
8	Մկրտիչ	» Յովնիկեան	
9	Յակոբ	» Չօպանեան	
10	Յարութիւն	» Սահակեան	
11	Սահակ	» Ղազարոսեան	
12	Սենեքերիմ	» Մանուկեան	
13	Ստեփան	» Պէյլիկեան	Բ. Ատենապետ
14	Տիգրան	» Բարաղամեան	

ԳԻՆ 2 ՂՐՈՒՇ

ՍԵՓՀԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՍՆՏՈՒԿԻՆ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ ԾԱԽՈՒՑ ԹԱՏԿԱՑԵԱԼ

Կը ծախուի ի Դիւանատան Պատրիարքարանի, և Ղալաթիոյ
Ս. Լուսաւորիչ Եկեղեցւոյ բանկալը և Հայ գրաւանաւաց քով: